Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈ
ԳՐԱԳԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

№ 2 (155) XV ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆ — ԿԱՐՄԻՐ ՑԱՐ

Ռայլասեռուոդ Հռոմը, մեծութեան և ապականութեան անման որբանը, գեղանի Բիւզանդիոնին՝ միապետութեան հետ միասին կնոկեց պատմական մի չարիք — ներքնական ոգին, որ օսմանեան սուլթանների մէջ մարմնացած՝ աջողութեամբ ձեռակերտեց հրէշ-կայսեր նորագոյն տիպը, — սուլթան Համիդ: Բիւզանդիոնը ժլատ չհանդիսացաւ: Դարեր առաջ նա նոր կրօնի ալիքները տարածեց սլաւ երկրի խորքերուն, իր յաջորդին՝ մահմետական Ստամբուլին թողնելով երկրորդ ընծայի պատիւը — տալ պետրոսակերտին մի փոքրիկ Համիդ, որը յանուն „հասարակական կարգապահութեան", հայկական արհաւիրքները վերարտադրելու փորձն արեց Նեվայի ափերին և հեռաստաններում, ի մխիթարութիւն համաշխարհային բռնապետութեան, տարաբախտաբար դեռ կանգուն և նոյնիսկ զօրաւոր...

Թէև տարբեր ծագումով և պատմութեամբ, թէև շատ հեռու միմեանցից և յաճախ նոյնիսկ „թշնամի", երկու բռնարանները՝ Պետերբուրգ և Կ. Պոլիս՝ նմանութեան հրաշալի ապացոյցներ են տալիս — խնկարկումն միապետութեան գահոյքի առջև, անծայր թշնամանք ապատարգութեան կուռին, հալածանք „հպատակ-ազգերի" դէմ, կոտորած՝ Վան, Էրզրում, Ակն, Խարբերդ, սուլթանական համիդիականների ձեռքով, կոտորած՝ Կիշինեւի, Պետերբուրգ, Վարշավա, Լոձ, Բագու, ցարի կօզակների ձեռքով. մի տեղ Տրէպով, միւս տեղ Նպլիմ փաշա. մի պալատում՝ Աբդիւլ Համիդ, անգութ և ամբարտաւան, ինչպէս ցար, միւսում՝ Նիկոլայ, մարդակեր և արիւնռուշտ, ինչպէս սուլթան:

Անման է կարմիր գահակալների համերաշխութիւնը:

1876-ին, երբ զայրացած Եւրոպան, յոգնած Եղլկըզ-Քիոսկի արիւնոտ դաւերից, սպառնում էր վճռական մի հարուած տալ սուլթանականութեան, Աբդիւլ-Համիդ, իրական երկիւղի ենթակայ, դիմեց իր նախահայրերի դարաւոր խաբէութեան — նա յայտարարեց օսմանեան պարլամենտի բացումը, „նախագուռը ապատութեան և հաւասարութեան": Իսկ Նիկոլայ Երկրորդ՝ երեք տարի առաջ միայն, արքայական պարծանքով համաշխարհային խաղաղութեան և զինաթափի ծրագիրը ներկայացրեց. Լահէի ժողովին, ճիշդ այն ժամանակ, երբ իր կառավարութիւնը ծածկօրէն զօրքի թիւն էր կրկնապատկում պետութեան սահմաններում: Եւ այդ պատմական խաբէութիւնը նրա համար միայն, որ առաջինը՝ Համիդ, „պարլամենտի" փակումը անմահացրեց բուլգարական սարսափներով, իսկ երկրորդը՝ Նիկոլայ, „խաղաղութեան" առաջարկը պսակեց Մանջուրիայի գողութեամբ և „պաշտպանական" այնպիսի սպանդանոցով, որի նմանը ստրուկ Ռուսաստանը երբէք չի տեսել և — յուսանք — երբէք չի տեսնելու...

Տասը տարի առաջ, երբ հայկական կոտորածների սարսափեցուցիչ գոյժը աշխարհ պատեց, առաջին կառավարութիւնը, որ հրճուանքով լեցուեց — Մոսկովեան միապետութիւնն էր, և առաջին գահակալը, որ իր աջողութիւնը կրկնապատկուած տեսաւ՝ դա Զմերային պալատի թուլամիտն էր: Երկուսն էլ, մէկը իբրև ղեկավարող, միւսը իբրև գործադրող, իրագործուած տեսան Լօրանովի գաղանային բերանով պատգամուած ծրագիրը՝ Հայաստան առանց Հայութեան: Իսկ տասը տարի յետոյ, երբ կատարուեց Պետերբուրգում յունուարեան կոտորածը, մի եղեռն, որ սարսուռի մէջ ընկղմեց համայն մարդկութիւնը և բողոքի ընդհանուր կոչ տարածեց աշխարհի բոլոր անկիւններում, առաջին գահակալը, որ բերկրանքից շփեց իր ոսկրացած ձեռքերը, դա — գաղանիք չէ այս — Եղլկըզի կալանաւորն էր, որ արքայական թագստարանի մէջ՝ հոգեկան զմայլանքով այս խօսքերը մրմնջաց՝ „Ես այժմ միայնակ չեմ, թող սպառնան, որքան ուզում են"...

Ուրիշ նմանութիւններ:

Մէկի ձեռքով հարիւր հազար խաղաղ աշխատաւորներ դիակացան Կարսի պատերի տակ, Պլէվնայի շուրջը և Թեսալիայի դաշտերում, միւսի շնորհիւ՝ անթիւ և անհամար երիտասարդներ գնացին արիւն թափելու Հեռաւոր-Արևելքի անծանօթ ձորերում, ոչ թէ, իհարկէ, հայրենիքի, այլ հայրենիքը աւերող աւազակախմբի համար: Մէկը սահմանեց Կիշինեւովի ցերեկը, միւսը 1896-ի Եղեռնը: Մէկը քրիստոնեայ եկեղեցիներն է թալանում, միւսը թալանած եկեղեցիների աւերմունքով է զբաղուած: Մէկը Ռօսֆորի ձկներին է տալիս այն յանդուգն գլուխները, թէև դեռ փոքրաթիւ, որոնք բռնապետութեան երգիչներ չեն ուզում լինել մահմետականութեան մայրաքաղաքում, միւսը Պետրօ-Պավլովսկի և Սիբիրի գետնափորերումն է լռեցնում այն ալնիւ, ըմբոստ ձայները,

որոնք մի տենչանք միայն ունեն՝ ցարիզմի անկումը, մի իդեալ միայն—ժողովուրդների ազատութիւնը... „Կարմիր գազաններից“ մէկը՝ անարգ դրաքննութեան միջոցով՝ թիւրք, հայ, մակեդոնական միտքն է սպանում, միւսը՝ ռուս, լեհ, հայ, վրացի և ֆին մտածողութիւնը: Մէկը հայերին է երկրից դուրս քշում, միւսը ֆիններին, մէկը աւետարանով է տանջում, միւսը ղուրանով...

Այդ անարգ „համերաշխութիւնը“ ցայտուն եղաւ մանաւանդ հակահայկական քաղաքականութեան մէջ, այն բոլոր ձեռնարկների միջոցին, որոնց կէտ-նպատակն էր տրորել ու փոշի դարձնել Անդրկովկասի և փոքր-Ասիայի քաղաքական ըմբոստութիւնը — հայկական շարժումը: Սահմանի մի կողմը՝ Հայաստան առանց հայերի, միւս կողմը՝ Անդրկովկաս առանց հայութեան—միմեանց լրացնող և աջակցող այդ ծրագիրն է, որ անպայման հրաշ-ւանք է պատճառում և՛ ցարին, և սուլթանին, և այսքա՜ն տարիներից ի վեր շքանշան ստանալու ամենաաւ միջոցն է դարձել վալիների համար և նահանգապետների ձեռքում: Կովկասում՝ ռուսական բանտերը, Հայաստանում թիւրքական զնդանները լի են նոյն ժողովրդին և նոյն հարցին ծառայող „անհաւատարիմներով“: Հայկական դպրոցը „վտանգի“ աղբիւր է և այս և այն կողմում: Էջմիածնում „պոլժենիան“ է պատուած, Կ. Պոլսում Հայոց Սահմանադրութիւնը: Հայկական արիւնով ներկուած են և՛ „զաբիթայի“ և „սոլդաթի“ սուրը: Հային նոյն ատելութեամբ հարուածում է թէ „ֆէսաւոր“ ոստիկանը, թէ „կոկարդակիր“ չինովնիկը: Նրա հողը խլուում է մի տեղ յանուն ռուսականութեան, միւս տեղ յանուն թրքականութեան, երկուսն էլ յանուն հայահալած միապետութեան...

Իրերի այս ամենաալի վիճակի յարատեւութիւնը հիմնական քաղաքականութեան կերպարանք է ստացել երկու երկրների մէջ.—միապետական Ռուսաստանի համար խորապէս ըղձալի է մի ուրիշ, աւելի անկազմ, աւելի փտած ու կրկնակի զզուելի կառավարութեան գոյութիւնը Թիւրքիայում, իբրև ապացոյց՝ թէ „իրանից աւելի վատերը կան“, իբրև մշտական առարկայ եւրոպական մտահոգութեան և հասարակաց վրդովման: Իսկ սուլթանական Թիւրքիայի համար կենսական արժէք ունի այն հանգամանքը, որ միշտ ղօրաւոր և միշտ կանգուն մնայ ցարիզմը, քանի որ նրա անկումից յետոյ, նոր-Ռուսաստանը չէ կարող և չի ցանկանայ համակրող և հովանաւոր լինել այն կործանիչ և մահաբեր քաղաքականութեան, որը այնքա՜ն առատ ամբարտաւանութեամբ թագաւորում է Կ. Պոլսի մէջ և ամբողջ փոքր-Ասիայի վրայ: Ցարիզմը սուլթանականութեան թիկունքն է Կովկասի և Բալկանի սահմանների վրայ սուլթանականութիւնը՝ ցարիզմի առաջապահակը փոքր-ասիական և բալկանեան քաղաքական բոլոր խլրտումների դէմ: Միմեանց լրացնող միմեանց ուժ և ոգի տուող տարրեր են դրանք, արժանի նոյն անէծքին և յեղափոխական նոյն գրոհին...

Տարաբախտաբար, այդ գրոհը միատեսակ տարածում չէ գտնում երկու երկրների ստրկացած, բռնաւորական շղթաներին ենթակայ ժողովրդների մէջ: Եւ մինչ ցարի թագաւորութեան սահմաններում յեղափոխական մարտը դէպի իրեն է գրաւում բոլոր ազգերը, սկսած Ֆինլանդիայից մինչև Կովկաս, մինչ մարտական այդ համերգի մէջ կողք կողքի են կանգնում բոլոր ժողովուրդների ռազմիկները, ոգևորուած ազատութեան մերձաւոր նշաններով, Օսմանեան պետութեան մէջ,—ցաւ է ասել—համերաշխ կռուի գաղափարը անմատչելի, անհասկանալի, նոյնիսկ անհաճելի է մնում երիտասարդ տարրերին: Քսան տարի կը լինի, ինչ հայութիւնը կռուի դրօշակ է բարձրացրել փոքր-ասիական նահանգներում, իսկ Բալկանի վրայ մակեդոնական շարժումը արդէն իր պատմութիւնն ունի, բայց այդ երկու ազգերին վիճակակից, նոյն թոյնով քայքայուած միւս տարրերը՝ թիւրք, ալբան, քիւրդ, դրուզ, ասորի, մնում են անտարբեր, անշարժ, ենթակայ ստրկութեան քնաբեր օրօրներին, և նոյնիսկ թշնամի այն շարժման, որ մի իղձ, մի նպատակ միայն ունի—բռնապետութեան անկումը, և որը արդէն հաղաբաւոր զոհեր տարաւ հայ և մակեդոն ժողովուրդների ծոցից... Նոյնիսկ թիւրք տարրը, համեմատաբար բարձր կանգնած և արժանի քաղաքական լաւագոյն կենցաղի, չէ ըմբռնում իր ընթացիկ պարտականութիւնը և մնում է լուռ և անտարբեր, ու նրա ծոցից դուրս եկած՝ քաղաքական միակ կուսակցութիւնը՝ Երիտասարդ-Թիւրքերի խումբը՝ դեռ ևս մի անհաճոյ քաոս է, արժանի յեղափոխական տարրական դասերի և բարոյական հիմնական զտման...

Յեղափոխութեան անդամալուծումն է այդ:

Ժողովրդական մասսաների այդ անասնական վիճակի մէջ է թագնուած այն անսպառ նիւթը, որ կեանք ու սնունդ է տալիս գահերի վրայ բազմած հրէշներին, որոնք անբաւական եղածից, իրենց կրկնակի պարարտացմանն համար տասն տարուց ի վեր ստեղծել են մի նոր աղբիւր—կոտորածի արիւնը, որով ներկուած են ցարի ու սուլթանի ձեռներն ու երեսը, գայիսօնն ու գահը...

Կոտորուածների, խողխողուած անզէնների արիւնն է այդ, որ չէ այրում, չի խեղդում, այլ յաճախ աւելի ամբարտաւան, աւելի յանդուգն է դարձնում ծիրանակիր-մարդասպաններին: Բայց ահա ծագում է արևը նոր օրերի, օրեր բողոքի և ըմբոստացման. թափւում է նոր արիւն, յեղափոխութեան ու ռազմի արիւնը, որի ծփանքներին չեն դիմանայ տեղահան գահերը ու գնդակահար պալատները, կարմիր ոճրագործների վերջին ապաստանները...

„ԴՐՕՇԱԿ"Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ուղղած եւրոպական մամուլին)

ԴԵՐԲԵՆՏ, 22 փետրուարի

Ստացուած տեղեկութիւններին նայելով՝ թիւրքերի յարձակումը հայերի վրայ, Բագւի մէջ, կազմակերպել և պաշտպանել ինքը ռուս կառավարութիւնը։ Երկար ժամանակից իվեր այդ տեսակ ընդհարում պատրաստւում էր ոստիկանութեան միջոցով Երևան, Գանձակ, Շուշի։ Սակայն շնորհիւ դիրք ունեցող թուրքերի ու հայերի ազդեցութեան ու յեղափոխական կոմիտէների աչալրջութեան՝ ոստիկանական այդ դաւը աջողութիւն չ'ունեցաւ։ Բագւի վերջին գործադուլի միջոցին ոստիկանապետը դրդում էր թուրքերին հայ բանւորների դէմ և նոյնիսկ զէնք բաժանում նրանց։ Հայ ժողովրդի գրգռումը մեծ է։ Սպասւում է հայերի հակահարուած։

ԲԱԳՈՒ, 23 փետրուարի

Զօրս օր է ինչ Բագւում սկսած է արիւնհեղութիւն և կոտորած։ Մահմէտականները յարձակում գործեցին հայերի վրայ։ Կազմակերպողը ինքը ոստիկանութիւնն է։ Տիրապետում է սարսափը։ Բանկերը ու զանազան այլ հիմնարկութիւններ փակւած են։ Ընդհարումներ փողոցներում։ Շատ ընտանիքներ հեռացան քաղաքից։ Կառավարութիւնը ձևացնում է, թէ անկարող է խաղաղութիւնների առաջն առնել։ Մի քանի թուրքեր բացարձակօրէն քարոզում են յարձակուել հայերի վրայ, վստահ կառավարչական աջակցութեան վրայ։ Երկիւղ կայ, որ շարժումը կը տարածւի և այլ քաղաքներ։ Հայերը շատ գրգռուած են։ Հայ յեղափոխական կոմիտէն՝ ջերմ պաշտպան թիւրք-հայկական բարեկամական յարաբերութեան, ամբողջ պատասխանատուութիւնը գցում է կառավարչական պաշտօնեաների վրայ։

ԲԼԲՈՒԼ

Գնա՛ բլբո՛ւլ, մեր աշխարհից,
Էլ դու այստեղ մի՛ երգիր,
Մեր օրը սև, մեր կեանքը՝ ցաւ,
Էլ այս երկրում մի՛ երգիր։

Տոնչած սիրտը անոյշ երգից
Ջրքրւում է, խորանում,
Սրտի վիշտը քո երգերից
Փրփրում է, լեռնանում։

Գնա՛ բլբո՛ւլ, մեր աշխարհից,
Գնա՛ երգիր ա՛յլ երկրում,
Ասա՛ այնտեղ, որ մեր վարդից
Արեան թարմ հոտ է բուրում։

Որ ողբաձայն մրմնջացող
Վտակների հոսանքին
Միանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեգին։

Որ ծաղկազարդ հովիտներից
Մահւան ցուրտ հոտ է փչում,
Որ մեր երկրում կանաչ դաշտերն
Իսկոյն կարմիր են ներկւում։

Գնա պատմի՛ր, որ դու տեսար
Այրուած մի երկիր,
Սարեր, ձորեր կարմիր հագած,
Արիւնազարդ մի երկիր։

Ա՜խ, չա՛ն բլբուլ, էլ մի՛ կանգնիր
Գնա պատմիր աշխարհին
Մեր ցաւն ու հոգս, վիշտն ու թախիծ,
Մեր օրերը դառնագին։

ԺԻՐԱՅՐ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌԻԻ

ԿՌԻԻՆԵՐ

ՍԱՍՆՈՅ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակ. № 1-ի)

4. ԼԱՃԸԿԱՆՑԻՔԻ ԿՌԻԻԸ

Դաշտին մէջ կազմւեր էին ջան-բէգարներու խմբեր, որոնք կը մտնէին հայերու գիւղեր և ամէն տեսակ նեղութիւններ կուտային բնակիչներուն։ Այս անգամ լուր կը հասնի, որ անոնք մտեր են Քիւրդէյտան (ասոր կողքին կը գտնւին հին Օղական ամրոցի աւերակները), Շէխլան, Ղըզըլաղաճ (Հրայր այս գիւղէն էր) գիւղերը և կաւերեն։ Անդրանիկի, Վահանի և Հրայրի կարգադրութեամբ՝ Մուրատ երկու զինուորներով դաշտ կ'ինէք մօտէն իմանալու այնտեղ կատարւածները, վերցնելու կամաւորներ և Տավրներ խորհրդի կանչելու պատասխանատու մարմինը։ Մուրատ իր շրջանը կատարելէ յետոյ, Սասուն կը վերադառնայ, հետը բերելով քսան կամաւոր զինուորներ. զանոնք կ'ուղարկէ Տավրներ, իսկ ինքն կերթայ Շէնքը։ Այդ ատեններ կառավարութիւնը եռանդով պրոպագանդ կ'ընէր թիւրքերու և քրդերու մէջ՝ յանուն իսլամութեան զէնք վերցնելու հայերու դէմ։

Մեծ պահքի վերջին օրերը, Տլավակեաժի հայեր իրենց բարեկամ քիւրդերէն կ'իմանան, որ թիւրքեր և քիւրդեր մտադրած են իրենց վրայ յարձակելու. ատոր համար լուր կ'ուղարկեն Շէնքը և Տավրներ ու օգնութիւն կ'ուզեն։ Կը կարգադրւի, որ Շէնքէն, Սէվալէն և Ալիանցիքէն 15-ական զինուոր և շալակաւորներ վերցուցած (վտանգի կամ կռւի ըսպէներուն գիւղի շարժական կայքը փոխադրողներ կը կոչւին շալակաւոր) Մուրատ երթայ Տլավակեաժցիները փոխադրէ. բայց մինչև որ Մուրատ կը հասնի, ուշիշ զատկի շաբաթ օր քիւրդերը ամբողջապէս կը սրբեն գիւղը, իսկ բնակիչները իրենց հետ տանելով կը բանտարկեն։ Մուրատ օգնութիւն հասցնելու յոյս չունենալով, կը վերադառնայ Կէլիէկընման և այնտեղէն զինուորներ ու շալակաւորներ կը ճամբէ Կէլիէկմսուրը դատարկելու, որ նոյնպէս թալանւելու վտանգի մէջ էր։

Կէլիէկընմանէն քիչ հեռու կը գտնւի քրդական փոքր գիւղ մը, ուր կը գտնւէր քիւրդ լաճըկանցի կոչւած աշիրէթի պէտ Գալօ։ Միւնոյն օրն էր, որ հայերը Կէլիէմսուրը կը դատարկէին. Գալօն իր մօտը կը կանչէ լաճըկանցիներու, պատրկանցիներու և ուրիշ քիւրդ աշիրէթներու երիտասարդները, մօտ 500 հոգի, և պատրաստութիւններ կը տեսնէ յարձակելու հայ գիւղերու վրայ։

Կէլիէմսուրէն հայերը իրենց հետ էին բերել նաև մի քրդացած հայ, Սէլիմ անունով, որ մի ժամանակ Ցամատեանի զինուորներէն էր եղեր։ Գալօն լուր կ'ուղարկէ Կէլիկընման հայ խմբապետներուն՝ վերադարձնելու յիշեալ քրդացած Սէլիմը. մերոնք կը մերժեն։ Գալօն երկրորդ անգամ կը դնէ իր պահանջը և միւնոյն ժամանակ կը սպառնայ բնաջինջ ընել Կէլիէկընման՝ եթէ Սէլիմը չվերադարձուի իրեն։ Հայերը կ'ուղարկեն միւնոյն մերժողական պատասխանը նաև կաւելցնեն, որ „եթէ կ'ուզէք կռւել, յիմարութիւն է ձեզ համար լոպէ կորցնել, մենք ձեզ կ'ընդունինք, ինչպէս որ պէտքն է"...

Մարտ 30-ի իրիկուան, ժամը 6-ին, Կէլիէկլիման կը հասնի պատրկանցի Արթինի եղբօր տղայ Մանօ, որոնց ընտանիքը, տունն ու տեղը կը գտնուէր քիւրդերու մէջ։ Քիւրդերը սրէ էին անցուցեր ամբողջ ընտանիքը և կողոպտեր տունն ու տեղը. Մանօն միայն կրցեր էր մի կերպ ազատուիլ. քիւրդերը անոր ետևէն եկեր էին մինչև Կէլիէկլիման։ Մերոնք Մանօյի պատմութիւնը լսելէ յետոյ, կը վաղեն գիւղէն դուրս, դէպի դիրքերը. քիւրդերու հրացաններու ձայնը գնալով կը շատնայ, դիրքերէն կը լսէր Մերոնց պատասխանը։ Մութը կամաց-կամաց կը կոխէր, ցուրտն ալ կը սաստկանար. երկու կողմէն բաւական հրացանաձգութիւնէն յետոյ, քիւրդերը կը քաշուին։

Առաւօտը բացուեցաւ, բերելով իր հետ արեան և վրէժի օրը։ Լուսաբացին սէմալցի զինուորներու մէջէն քրդացած Սէլիմը կը յաջողի մի կերպ փախչիլ։ Իսրօն մի քանի զինուորներու հետ վեր կը կանգնի զայն փընտռելու. երբ գիւղէն դուրս կուգայ, կը նկատէ, որ քիւրդերը արդէն եկեր և գիւղին մօտ, թփերի ետև, դիրք են բռներ. ամիջապէս կը կրակէ հրացանը, և կռիւը կըսկսի երկու կողմէն։ Հրացաններու ձայնէն՝ Մուրատը գիւղի մէջ թողնելով Շէնքի իշխանը, ինքը զինուորներով կռուի վայր կը թռչի. անոր նպատակն էր առաջին անգամ մի կերպ կռուի առաջն առնել։ Բայց երբ կը տեսնէ, որ քիւրդերը արդէն գիշերանց պատրաստուած են եղեր յարձակուելու, Գալօն ալ թուրը ձեռք բռնած՝ սալավաթ տալով քրդերուն սիրտ կուտար և յառաջ կը քշէր, և մանաւանդ երբ կը տեսնէ Իսրօյի մարմինը արեան մէջ շաղախուած և անկենդան գետին ընկած, ալ կրակ կը կտրի. „Վրէ՜ժ ընկերներ, Վրէ՜ժ“, կանչելով առաջ կ'իյնայ։ Ընկերները տեսնելով անոր ինքնամոռացութիւնը, կ'ուզեն ետ կեցնել զայն և անոր փոխարէն իրենք կռուիլ. բայց անոր հոգու մէջ սկսուած փոթորիկը, նահատակ Իսրօյի վրէժը՝ անոր թևեր էին տուած։ Այդ ինքնամոռացութեան և արիութեան օրինակը շուտով կը վարակէ բոլոր ընկերները, և կըսկսի կատաղի կռիւը։ Չնայած որ քիւրդերու բռնած դիրքերը աւելի լաւ էին քան Մերոնցը, այսուհանդերձ քիւրդերը մէկիկ մէկիկ գետին կը գլորուէին։ Գալօ աղան ալ, որ հայերը ջնջելու երազներ կը տեսնէր, մուրազին չհասած զոհ գնաց ֆէդայու վրիժառու գնդակին։ Շէնի քիւրդերը աճապարած էին Գալօյին օգնութեան հասնիլ։ Շուտով կռուի տեղը կը հասնին նաև Իսօն, որ Սէմալէն կուգար և շէնքցի Ղազար։ Տղայք նոր թափով մը կը յարձակին, կը քշեն քիւրդերը իրենց դիրքերէն և գնդակներու կարկուտի տակ կը փախցնեն. քիւրդերը գիւղը կ'ապաստանին։ Տղայք դէպի Գալօյի գիւղը կը յառաջանան. կռիւը այժմ փոխադրուած էր մի ձորի մէջ. Սէմալի իշխան Մանուկ և պատրկանցի Արթին կը բռնեն երկու կողմի կաժերը (կաժ սասունցոց բարբառով կը նշանակէ գագաթ՝ բլուրի կամ լերան), որպէս զի քիւրդերու այդ կողմէն յարձակումը արգիլեն. իսկ Մուրատ կուելով դէպի գիւղը կը յառաջանար. երբ նա արդէն գիւղն էր, կտուրներու վրայ ձայն տուեց ընկերներուն խոտ բերելու և գիւղը բնակիչներով հրդեհելու համար։ Քրդերը տներու մէջ փակուած կը պոռային, կ'աղաչէին, որ իրենք անձատուր կը լինին, իրենց խնայեն։ Ատոր վրայ հայ զինուորները կ'ուզեն գիւղը մտնել զինաթափ ընելու զանոնք. բայց քրդերը ստելով, իրենց խոստման հակառակ, կրակ կ'ընեն, որմէ կ'ընկնի երկու տղայ։ Այն ատեն Մուրատ առանց ժամանակ տալու քրդերուն՝ զինուորներով տներէն ներս կը մտնէ և կը կոտորէ, իսկ Կօտօյի Հաջին միւս կողմէն կ'այրէ գիւղը։ Այս կռուի մէջ քիւրդերէն կը կոտորուի 41 մարդ, իսկ մերիններէ Ասոնք, որոնց մասին յիշեցաւ արդէն։ Քիւրդերէն վերցուեցաւ 17 հրացան։

Պէտք էր տեսնել այս կռուի ժամանակ Սասունցի կիներու ոգևորութիւնը, որոնք հաց, ուտելիք, ռազմաթերք ալ շալակած՝ կռուի տեղը կը տանէին և իրենց քաջալերական խօսքերով կը խրախուսէին կռուողները։ Կռուից յետոյ Կէլիէկլիման պարպելով, բնակչութիւնն ալ իր շարժական կայքով զինուորներու հետ կը քաշուի Շէնքը։

Այս կռուէն երկու օր վերջ, քրդերը յարձակեցան Ծովասարի Արդխու և Քորախու գիւղերու հայերու վրայ, տները այրեցին և կողոպտեցին. Տալորիկէն Սմբատ օգնութեան հասաւ, բայց թալանի մի մասը միայն կարողացաւ վերադարձնել։

5. ՇԷՆՔԻ ԿՈՒԻՎ

Ապրիլ 6-ին Շէնքը-Սէմալի մէջ նամակ մը ստացուեցաւ Անդրանիկէն. նամակի մէջ ըսուած էր. „Մուշէն երկու գունդ զօրք կուգայ. մէկը կը քալէ դէպի Հաւատորիկ, իսկ միւս մասը պիտի գայ Շէնքը-Սէմալի վրայ. պատրաստ կեցէ՛ք“։ Շէնքը գտնուող ժողովուրդը ապահովութեան համար տեղափոխուեցաւ Սէմալ. գիւղը դատարկուեցաւ, բայց մերոնք դիրք դրած կըսպասէին։ Առաջին փորձէն կառավարական զօրքը չկարողացաւ գալ Շէնքը, որովհետև բաւական շատ ձիւն եկած էր և գոցած ճամբաները. բայց ապրիլ 11-ին սուարիները (հեծեալ զինուոր), թիով 700 հոգի, մտան Շէնքը։ Սեպուհ և Աւետիսն ալ Ալիանցիքի կողմէն Շէնքը հասան. մերոնք դիրքերից, իսկ զօրքերը գիւղի մէջէն սկսեցին կռիւը, որ տուեց 4 ժամ։ Թիւրքերը տղայոց կրակի առջևէն պարտաւորուեցան քաշուիլ կամաց-կամաց. մերոնք վրայ յարձակուելով քշեցին զանոնք մինչև Գալօյի գիւղը, նախորդ կռուի տեղը։ Այս կռուի մէջ սպաննուեցաւ Ալիանցի կտրիճ Կիրօն. իսկ թշնամու կորուստը եղաւ 4 սուարի և քիւրդ սպաննուած, 13 հոգի վիրաւորուած և 7 հրացան կողոպուտ տրուած։ Այսքան կորուստներ տալէն յետոյ, բնականաբար կառավարութիւնը ետ չպիտի մնար իր ծրագրէն, որով նա որոշել էր հայ տարրը ջնջել Սասունէն, ապագայ բարդութիւններու առաջն առնելու համար։ Ատոր համար նա անշուշտ պէտք էր Սասուն ուղարկէր նոր և աւելի մեծ ուժեր։ Մերոնք կը գուշակէին այդ, ուստի կռուէն յետոյ Սէմալ վերադարձան, կռուի նոր պատրաստութիւն տեսնելու և նոր ծրագիր կազմելու համար։

6. ՍԷՄԱԼԻ ԿՈՒԻՎ

Սէմալի ճանապարհներու վրայ նշանակուեցան զինուորներ՝ թշնամուն շարժումները դիտելու համար։ Ապրիլ 12-ին, ցորեկուան ժամը 6-ին Սէմալ եկաւ Ս. Յովհաննու վանքի Առաքել վարդապետը, հետը բերելով պատրիարքական կոնդակը և սուլթանի իրատէն։ Կոնդակը կը հրաւիրէր սասունցիները հնազանդ ու խաղաղ լինել և լսել սուլթանի հայրական (՞՞) կարգադրութիւններուն. իսկ սուլթանի իրատէն ներում կը շնորհէր բոլոր ըմբոստացող տեղացիներուն և ազատ ճանապարհ կուտար Սասուն գտնուող օտարական յեղափոխականներուն հետ

դառնալու իրենց երկրները։ Այդ օր Սէմալ եկաւ նաև Անդրանիկ։ Վարդապետը վերադարձաւ առանց դրական պատասխան ստանալու։ 94-ի դէպքերը բաւական ապացոյցներ էին հաստատելու, որ չի կարելի բնաւ Թշնամու խոստումներուն հաւատալ և միշտ յիշեցնելու յեղափոխականներուն, որ այդ տեսակ բոլոր պաշտօնական բանակցութիւնները լոկ „պատրուակներ“ են ժամանակ շահելու և պատասխանատուութիւնը վրայէն նետելու։ Ատոր համար մերժուեցան կոնդակն ալ, իրատէն ալ։

Շէնքը ու Սէմալ Սասնոյ Շատախ գաւառի ամենամեծ գիւղերն են և կը գտնուին փոքրիկ սարահարթի մը վրայ, Շէնքը դէպի արևմուտք, իսկ Սէմալ դէպի արևելք։ Սէմալի առջևէն արևելքէն արևմուտք կտրելով կ'անցնի ջուր մը, որուն տեղացիներ Զայ կ'անուանեն։ Զայի հարաւային կողմ անմիջապէս կը բարձրանայ շարք մը բլուրներ, որոնք Շատախը կը բաժնեն Սասնոյ միջին մասէն և որոնք կ'որոշուին Զայի գլուխ անունով։ Շէնքի կողմէն գետնի տափարակութիւնը աւելի կ'երկարձգի դէպի հարաւ. այդ տափարակի հարաւի վերջաւորութեան վրայ կը գտնուի ուրիշ գիւղ մը, Ալիանք կամ Ալիանցիք անունով։

Երբ Առաքել վարդապետ Սէմալի մէջ յեղափոխականներու հետ բանակցութեան մէջ էր, միւս կողմէն կառավարութիւնը ութ վաշտ զօրք բերած, բանակեցուցած էր Շէնքի մօտ, ուր հաւաքած էին նաև 3-4.000 քիւրդ։ Թշնամու միտքն էր բանակցութեան վերջանալուն պէս վրայ տալ երկու մասի բաժնած էր իր ուժերը. մեծ մասը պիտի յառաջանար դէպի հարաւ, Ալիանքի վրայով անցնելու Բէրբէրի հովիտով և մտնել Կէլիէ-կուզանի հովիտը. իսկ միւս մասը պիտի յառաջանար դէպի արևելք՝ Սէմալ, Զայն ու Զայի գլուխները անցնելով նորէն պիտի մտնէր Կէլիէի հովիտը։ Ատոր համաձայն ալ մերոնք բաժնեցին իրենց ուժերը։ Անդրանիկը գնաց Տափրկի գիծը, Հրայր, Մարտիրոս, Սեպուհ, Աւետիս և Իսօն գնացին Ալիանքի գիծը պաշտպանելու, իսկ Մուրատ, Հաճին և Տանոյի Մակար պէտք է պաշտպանէին Զայը և Զայի գլուխները (Մէլներոս լեռ)։ Սէմալի ժողովուրդը կամաց-կամաց քաշուեց Կէլիէ-կուզան։ Մենք պէտք է պատմենք նախ Ալիանքի կողմը անցած-դարձածները, ապա կը դառնանք դէպի Զայը։

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԼՈՒՐԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 20 դեկտ. (Հ. տ.) 1904

Տեղեկութիւններ կ'ուզէք այս կողմերու վիճակի մասին. — Տառապանքներու անվերջ շղթայ մ'է հայոց քաշածը։ Կը շարունք որ մէկը գրել այն անլուր չարիքներու, որոնք երբէք չեն ազդեր եւրոպական դահլիճներու շահամոլ և անողոք քաղաքականութեան վրայ։ Ամբողջ ազգ մը կը մարտիրոսանայ և չգտնուեցաւ ձեռք մը, որ բռնէր դահիճներու ձեռքը և կանգնեցնէր հոսող արիւնը։ Կը խնայեինք ազգի դառն ճակատագրին առաջ. մանրինք, մարտիրոսինք, սոսկալի թշուառութեամբ թող ջնջին ազգատոհմեր, տուներ, օճախներ, թող փակուին դռներ, քայքայուին տաճարներ, բայց հետևանքը... Մինչև ե՞րբ պիտի շարունակուի այս դառն ճակատագիրը... Տանք այս հարցումը մենք մեզի և մանաւանդ Եւրոպային, մեր ենթադրեալ պաշտպանին, և կրկնենք մեր սովորական յանկերգը ժողովրդի վշտերու համար։

Դժոխային հարկահաւաքութիւնը կը շարունակուի. ոչ ոք վճարելով կարող է ազատուիլ. որքան տաս նորէն կը պահանջեն։ Կը պահանջեն արիւնոտ խարազանով՝ առանց խնայելու սեռի կամ՝ հասակի։ Զեն յագենար չարչարելով։ Իւրաքանչիւր հարկահաւաք ազատ է նոր-նոր չարչարանքներ հնարել՝ գեաւուրները կենդանի սպաննելու։ Մշոյ արկածեալ գիւղերէն իսկ չարաչար կը գանձեն։ Եթէ ուրիշ չարչարանքներ չ'ըլլան՝ հարկահաւաքութիւնը բաւական է իսպառ փճացնելու գեաւուրները։

Տասանորդի վարձակալութիւնը ուզածին պէս այս տարի ալ ի գործ դրաւ իր պատմական կեղեքումները։ Ամենաաղքատ վարձակալ (Միլթէզիմ) մը տարեան մը մէջ մեծ հարստութիւն կը դիզէ. անբախտացած հայու բերնի պատառն ալ կը խլեն։ Արդէն տուրքի այդ դրութիւնը կը քանդէ երկրագործի օճախը։

Պաշտօնական հալածանքներէ, քաղաքական պատրուակին ներքև, ամէնէն թանկ նստած են ժողովրդին, որու ամէնէն լաւագոյն զաւակները մեռան հետապնդումներէն և սոսկալի բանտերու տարտարոսներու մէջ։

Ստացուածքներու և հողերու յափշտակութիւնը՝ բռնակալական զանազան ճնշումներու ներքև՝ կը շարունակուի։

Յեղուզակ քրդերու արարքները նոյնպէս։ Ոչ միայն կը կողոպտեն, այլև կրսպաննեն, կ'առևանգեն. կը բռնաբարեն ամէն իրաւունք, ամէն պատիւ։ Պուլանըգէն լուր կուտան թէ՝ հոկտեմբեր 28-ին, Լաթար գիւղի շէյխերէն (Լաթար կը պարունակէ 50 տուն հայ և նոյնքան քիւրդ)՝ շէյխ ՆէՃիմ, շէյխ Զէյնէլապտին, շէյխ Շաքիր, շէյխ Իպօ, Մուրատի լամուկը ելն, ցորեկ ժամը 10-ին կը յարձակին Օհնէ անուն հայու տան վրայ, հարիւրաւոր հրացաններ կ'արձակեն և բռնի կ'առևանգեն անոր Փէրի անուն աղջիկը, որու լաց ու կոծին վրայ, երբ ծնողքն օգնութեան կը դիմեն և աղջիկը կը խլեն, քիւրդերը աւելի կատղած՝ կը վիրաւորեն աղջիկը, անոր մայր Դեղձանը, եղբայր Յակոբը և կրսպաննեն աղջկայ հօրեղբօր որդին Գէորգը։ Եւ երբ կ'որոշեն բոլոր հայերը ջարդել՝ ժողովուրդը ընտանիքներին առած կը փախի։ Այսպէս 35 տուն հայեր կը գաղթեն և կը ցրուին Խնուս, Պուլանըգ, Մանազկերտ. իրենց ունեցածները կը յափշտակուի։ Աղջիկը թէև ազատուած է, բայց ոճրագործները դեռ անպատիժ կը մնան...

Խոյթ ու Բոնաշէն գաւառներու մէջ ափ մը հայեր մնացած են, սակայն քիւրդերը փուլթոյ պնդութեամբ պանոնք ալ հալածելու, ջնջելու և անոնց հողերը գրաւելու նեռեն են։ Վերջին 4-5 տարուան մէջ 20-ի մօտ հայաբնակ գիւղեր դատարկուած են, ուր կը մնայ միայն հայոց մի պարաւոր վանք Ս. Աղբերիկ անունով, որու վրայ յառած են քրդերու և բռնապետներու աչքերը։ Արդէն պլըգցի և սասունցի ըսուած քիւրդ աշիրէթներէն՝ Ըվէսի Սէլիմ, Շառօ Միրխան, Շապէ Մահմատ, Նշանաւոր Հաճի Գէրոյի Հօրեղբայր Ընդզ ելն, գրաւած են վանքին դաշտագէմ, Ոլուք-թաղ ըսուած ագարակները, ջրաղացը, անտառները և կրսպառնան անոր գոյութեան։ 1900-ին սպաննեցին Պազար վարդապետը, հիմակ ալ ետևէ են

նոր վանահայրը նոյնպէս սպաննելու, որպէս զի իսպառ գրաւեն վանքը, որու դռներ, առ ահի, գիշեր-ցորեկ փակ են։ Աշնանս՝ քանի մը կարևոր հայեր զարկին այդ կողմերը.—Բռնաշէնի ամենէն կարևոր գիւղապետ Սահ-փան սպաննեցաւ։ Ղլեգցի Հլոյի տղայ Շքրոյէն գնդակով, և ցորեկ ատեն ընկուզնակցի Խաչօն և եղբայրը չարաչար վիրաւորեցան։ Պէյալի ըսուած քիւրդեր սպաննեցին Հատսբացի Սաֆօ անունով հայը։ Պլեգցի Մախսուտի Սատօն Արծիկ գիւղի հայոց 48 ոչխարը յափշտակեց և տները կողոպտեց։ Ստեփանը սպաննող Շաքոյի եղ-բայր Իպրահիմ կալին մէջ սպաննեց Ալվառինճի ռէս Սմբատ և վիրաւորեց Յակոբ Ա. Ղազարեանը. իսկ դեկտ. 2-ին դարձեալ նոյն աշիրէթէն Գիլիթ անուն գազանա-բարոյ քիւրդը սպաննեց շվակցի Խաչոյի տղայ, 25-ամեայ Պօղոսը, տանը մէջ, ծերունի մօր աչքին առջև։

ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆ, 23 Հոկտեմբերի

Սեպտեմբեր 15-ին վանեցի երկաթագործ Ալէքսան՝ Առջրա գիւղացի ռէս Նասօն և Գարաքէշիշ գիւղացի Զաքէեան Փանոս՝ Մանազկերտ գաւառակի Սուլթամուտ գիւղի Հալաճ-Հաճի պաշ աղայի հետ Գասին կերթան ի Սիւթէն-Գարաղուլ գիւղ՝ Հայտարանցոց ցեղապետ Հա-միդիէյի մերալայ Հիւսէյն փաշայի վրան. անկից յիշեալ երեք ազգայինք կը մեկնին դէպի Արծկէ՝ Հիւսէյն փաշան տեսնելու նպատակաւ և Աղ-պուլագի Մըրըղի-Հայիր ըսուած տեղը երեքն ևս կըսպաննուին։ Դիակներն չգտնը-ւեցաւ, վասն զի պարկերի մէջ դրուած և քիւրդերուն ձեռամբ Սիւթէյի լիճը ձգուած են։ Կառավարութիւնը, ինչպէս միշտ, այս անգամ ալ կոյր կը ձևանայ։

ՌՇՏՈՒՆԻՔ, 2 Նոյեմբերի

Նարեկի ծանօթ դէպքից յետոյ սպանուած Աբդիւլ-Համիդի եղբայր Աբդիւլ-Կաֆիրը իր վրէժին լեռ-թիւն տուեց ութ գիւղացի սպանելով, որոնցից երկուսը կին են և վեցը երեխայ։ Տեղի են ունեցել անթիւ կանանց ու աղջիկների բռնաբարութիւններ։ Չարագործու-թեան ամենագլխաւոր հերոսը եղել է Ոստանի գայ-մագամ Լուլթիի պէյ և իւզբաշի Խալիլ էֆէնտի։ Այս վերջինս յանձնել է Աբդիւլ-Կաֆիրին 300 փամփուշտ ժողովրդին կոտորելու ծրագրով։ Ե՞րբ պիտի պատժուին այս լիրբ պաշտօնեաները։

Կուսակալը նորերս ոստիկան-պրօպագանդիստներ է հանել երեք տեղ քիւրդական գիւղերը. նրանք ամէն կերպ համոզում են քրդերին աշխատել գեավուրների հիմքը կտրել աշխարհից։ Ոստիկանները պտըտում են քիւրդ գիւղերում՝ իրենց մարդասպան պրօպագանդը առաջ տանելու համար և վերադառնալով հաշիւ են ներկայացնում կուսակալին։

ՊՈՒԼԱՆԸԳ, 25 Հոկտեմբեր

Կառավարութիւնը ներքին և վերին Պուլանըգէն քիչ շատ նիւթական տէր հայերը ձերբակալելով, 40-50 ոսկի կաշառք առնելէ վերջ միայն կ'արձակէ, պատրուակ բրո-նելով յեղափոխութիւնը։ Հասանցի, Զիլպանցի համի-տիյէ աղաներ բանի տիրապետած են՝ իւրաքանչիւրը մէկ կամ երկու հայ գիւղերու, հողեր ու տներ գրաւեր։ Պու-լանըգի և Մանազկերտի հայ կիներու և մատղաշ աղջիկ-ներու բռնաբարութիւնները ծանօթ են արդէն։ Այդ ոճրագործներու մէջ յայտնի են՝ Հասանանցի Ռըզպալը, Ճիպրանցի Հայտարը, Սէյիտ աղաները և Ալպրի գիւղի Քեամիլ ու Սլէման շէյխերը։ Հայտար՝ Մարիամ անուն աղջիկ մը բռնի կնութեան առնելու համար՝ հրապարա-կաւ սպաննեց գիւղապետը և ուրիշ քանի մը հոգիներ. խեղճ աղջիկը երկու անգամ կը փախի ու ինքզինք գետը կը նետէ խեղդուելու և ազատուելու համար, բայց՝ չի յա-ջողիր. նորէն կը ձերբակալուի։ Ուշեալի մեծ պատիժ են այն կողմի ժողովուրդին համար՝ Ալպրի, Կեապէլան և Լաթար գիւղերու մէջ հաստատուած մոլեռանդ շէյխերը, որոնք հեղինակ են կանանց և աղջկանց մահմէտական-նացման ու սպանութեանց։

Պոսթաքէնտի գիւղապետ Մարտօն, Պօղոսը և Դանիէլը իրենց տների մէջ յարձակում կը կրեն քիւրդերէ և գիւ-ղին մէջ կըսպաննուին։ Խարապաշէհերի Տէր Պետրոս քա-հանան կըսպաննուի հասանցի Դարիհ պին Ալվանի քիւր-դէն։ Շէխեաղուպցի Շահէնն և իր եղբայրը կըսպաննուին Հէրքէղ Ըէճէպէն։ Բաղէշցի Յակոբ Հիւրմիւզեանը կըս-պաննուի Մանազկերտի և Պուլանըգի մէջտեղը, իրեն ընկերացող ոստիկաններու կողմէ։ Կոմիտցի քանի մը հայեր, որ կովկասէն պանդխտութենէ կը վերադառնային, Մա-նազկերտի մօտերը կը կողոպտուին և չարաչար կըսպան-նուին համիդիյէ քիւրտերէ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԽԱՐԲԵՐԴԻ ՇՐՋԱՆԻ

(Շարունակ. № 11-ի)

Խարբերդ, 8/21 Մայիս

Նախնական քննութեանց թղթերուն տակ իբր վկայ նշանակուած փոլիսները, ժանտարմները և կառավա-րական պաշտօնեաները միշտ իրար հակասեցին, շատ անգամ ջնջելով հիմնովին մէկուն կամ միւսին վկայու-թիւնը և այսպէս երևան բերելով մէկ կողմէն գո-հերու անմեղութիւնը և միւս կողմէն ծրագրուած մեքե-նայութեան մը բոլոր աղտոտ գործադրութիւնը։ Լարուած տրամադրութիւնները հանդարտեցան առաջին մէկ քանի նիստերուն իսկ և կամաց կամաց գթութիւնը ծայր տալ սկսաւ ամենուն սրտին մէջ դէպի դժբախտ անբաստա-նեալները և ատելութիւնը դարձաւ այս դժոխային գործին հեղինակներուն դէմ։

Ցարութիւն Սէմէրճեան, Ցաբէթ և Յակոբ կ'ամբաս-տանէին թէ յեղափոխական գործի մը ղեկավարներն են հոս և ասո՛ր իբր ապացոյց՝ կը ներկայացնէին Ցա-րութիւնի տունէն բռնուած չորս հրացանները և չորս ձեռք էրքէղի լաթեր, այլ և ոչ մէկ ուրիշ ապացոյց։ Բայց դատարանին ներկայութեան երբէք չի կրցան ապա-ցուցել թէ այդ զէնքերը իրա՛ւ Ցարութիւնին տո՞ւնէն ձերբակալուած էին,—որովհետև վկաները լոկ փոլիսներն եղան և դրսիներն ալ զիրար հակասեցին — և եթէ նոյնիսկ անոր տունէն ալ ձերբակալուած ըլլային՝ իրաւ Ցարութիւնի՞ն էին, քանի որ Ցարութիւնը թիւրքի մը տունը վարձու կը նստէր և այն զէնքերը ոչ թէ Ցա-րութիւնին բնակած յարկաբաժինէն, այլ տանտիրոջ տրամադրութեան տակ գտնուած ախոռէն գտնուած էր։ Ամբաստանագիրը այդ 43 անձերը կ'ամբաստանէր իբր յեղափոխական կազմակերպութեան մը անդամակիցները,

սակայն և ոչ մէկ կապ, և ոչ մէկ յարաբերութիւն հաստատող ապացոյց մը կար մէջտեղը։

Մոռցանք ըսելու, թէ բացորոշ խայտառակութիւն մը ու անիրաւութիւն մը գործեցին նաև ընդհ. դատախազի փոխանորդը ու ամբաստանիչ ատեանը, երբ առաջինը մէկ օրէն պատրաստեց 43 անձի պահանջագիրը և երկրորդը՝ հինգ ժամէն իր ամբաստանագիրը, այսինքն վաւերացուց ամբողջովին ընդհանուր դատախազի փոխանորդին պահանջագիրը, առանց երբէք կարդացած ըլլալու ձերբակալուողներու նախնական հարցաքննութիւնը, բան մը՝ որ եթէ տեղի ունենար, ուրեմն կամ տասնը հինգ օր պիտի գրաւէր անկասկած, նկատի ունենալով թէ այդքան ամբաստանեալներու հարցաքննութիւնները մեծադիր տետրակի մը 300 երեսները գրաւած էին։ Ամբաստանիչ ատեանին վրայ ալ նորէն դատական քննիչ Համտի պէյը բռնացած էր, պահանջելով որ առանց քննութեան ամէնքն ալ ամբաստանեն մահուան պատիժով։ Որովհետև, եթէ ամբաստանիչ ատեանը խղճմտօրէն ու արդարութեամբ ուզէր կատարել իր պաշտօնը, գրեթէ ամէնքն ալ ազատ պիտի թողուր շատ-շատ 5-6 հոգի մը հազիւ դատարանին ղրկելով այն ատեն չէ՞ որ բոլոր դաւադրութիւնը երևան պիտի ելնէր, չէ՞ որ աղաղակող լեռը չնչին մուկ մը պիտի ծնէր միայն։

Այսպէս ինն ամիս 43 հոգի, որոնց անչափահաս զաւակներու թիւը միայն երկու հարիւրի կը մօտենար, խեղճ, թշուառ, մնացին բանտին խոնաւ անկիւնները, մարդոց յետիններուն՝ թիւրք ոստիկաններու արհամարանքին ու նախատինքին ենթակայ, երբ արդէն դուրսը իրենց ընտանիքներէն շատերը մուրալու վիճակին հասան։

Ամբաստանագիրը դիտումնաւոր չարութեան ստութեան ողբալի գլուխ գործոց մըն էր, ուրկէ կարելի էր ափերով հակասութիւն քաղել, կարդալ պէտք էր այս մասին վերջին նիստերուն մէջ խօսուած փաստաբան Նատրի պէյին հրաշալի մէկ պաշտպանողականը։ Նատրի պէյ իբրև արդարասէր և զարգացած թիւրք մը՝ որ նախանձախնդիր է իր հայրենիքին ու իր կառավարութեան պատուին՝ կուռ, ազգու և կորովի խօսքերով կը ձագկէր պաշտօնեաներու անարդար վարմունքը, զեղծումները և մեքենայութիւնները, երևան կը բերէր՝ թէ ինչպէ՞ս նոյնինքն ամբաստանագիրը բաց ստութիւնով ու հակասութիւնով լեցուած է. օրինակ, կը յիշէր Զարդարեանի պարագան, որուն համար ամբաստանագիրը սապէս կ'ըսէր. „Զարդարեանի տունէն ձերբակալուած թուղթերը՝ թէև չեն թարգմանուած, բայց հասկցուած են թէ վնասակար են և շատ վարպետի գրիչով մը գրի առնուած, անոր ամէն մէկ նախադասութիւնը վնասակար է։ Նատրի պէյ կը հարցնէր թէ հայերէն չի գիտցող հարցաքննիչ մը, առանց հայերէն գրուած մը թիւրքերէնի թարգմանած ըլլալու, ի՞նչպէս կը գիտնայ անոնց վնասակար հանգամանքը, մանաւանդ վարպետի գրիչով գրի առնուած ըլլալը և ամէն մէկ նախադասութեան վնասակար հանգամանքը։ Իրողութիւնն այն է սակայն, որ Զարդարեանի նոյն այդ թղթերը Մէարիֆին կողմէն պաշտօնապէս թարգմանուելով, դատարանին պահանջին համաձայն, հասկցուեցաւ թէ զուտ գրական և իմաստասիրական կտորներ էին, շատերը կ. Պոլսոյ և Իզմիրի հանդէսներուն մէջ հրատարակուած արդէն դրաքննութենէ անցնելէն ետքը։

Եւ դեռ ի՞նչ անարդարութիւններ, ի՞նչ անարդարութիւններ։ Օրինակի համար. Ցարութիւն Թաշճեանի վրայ ծանրացող բոլոր ամբաստանութիւնը ա՛յն է որ կարապետ Թաշճեանի եղբայրն է միայն, ուրիշ ոչի՞նչ, մինչդեռ կարապետի մնասակար ըլլալը երկբայելի է. թող որ կարապետը վնասակար ըլլայ, իր եղբայրը ինչո՞վ մեղաւոր է։ Պետրոս Սահակեան մը ձերբակալուած է, որովհետև Համբարեանին տունը խուզարկուած օրը իբրև ազգական, անգիտակցաբար հոն գտնուած ըլլալու դժբախտութիւնն ունեցեր է։ Գառնիկ Տ. Պաղտասարեան ձերբակալուած է, որովհետև Խուրի Խաչօյին պարտէզը խուզարկուած ատենները՝ այդ կողմերէն կ'անցնի եղեր, և ճակատը քրտինք կայ եղեր, ուրիշ ոչի՞նչ։ Կարապետ Գալուստեան հեռագրով Պիթլիզէն բերուած է, ուր գացեր էր իբրև վաճառական ապրանք ծախելու, — չի գիտցիր ինչո՞ւ. և ոչ մէկ յայտնի ամբաստանութիւն, և դեռ կարելի է այսպէս երկարել, ամենուն համար առանց բացառութեան։ Թարեբախտութիւնն հո՛ն եղաւ որ նորեկ կուսակալ Հիւսնի պէյ, ինչպէս նաև դատարանին նախագահն ու Պոլիսէն եկող ընդհ. դատախազը, Իրֆան պէյ, ճշմարիտ և խիստ գովելի արդարութեան մը հետևեցան։ Հարկաւ Պոլիս ալ գիտցնելով ուր որ անկ է, խնդրին իսկական վիճակն ու պարագաները, եթէ ոչ բոլոր վստահութեամբ, 43 անձերն ալ առանց բացառութեան այսօր մէկ-մէկ պատիժի ենթարկուելով դատապարտուած կ'ըլլային արդէն, որովհետև այդ խնդիրը ստեղծիչ և շահագործող վոհվակը մինչև վերջը զինաթափ չեղաւ, և ինչպէս որ լսուեցաւ, դատական քննիչ Համտի պէյ ըսած բորենին չի դադրեցաւ անընդհատ Պոլիս սուտ լուրեր հաղորդել, իր անձնական պաշտպաններու միջոցով նոյնիսկ վնասել ու արատաւորել ջանալով արդարասէր պաշտօնեաներէն շատերը։

Ըսենք թէ այս 43 հոգիներէն զատ դեռ շատ անձեր ալ խարբերդի մէջ նախնական քննութիւններու ատեն, ձերբակալուած, տանջուած և դրամ տալով ազատած էին, ըսենք թէ կարգ մը կիներ ալ գիշերներով կառավարական շէնքին մէջ պղծուած էին, որոնց պատիւն ու արժանապատուութիւնը արգելք կ'ըլլան անձնապէս անուանելու զիրենք հոն. ըսենք նոյնպէս թէ, դեռ այս ու այն հարուստէն ալ շատ մը ոսկիներ առին ու բաժնեցին իրենց մէջ խարբերդի մալ միւդիւրին, փոլիս գոմիսէր Համդին ու դատական քննիչ Համդի պէյը, ուղղակի կերպով սպառնալով թէ՝ հակառակ պարագային պիտի ձերբակալեն զիրենք ալ։

Ըսենք վերջապէս թէ Յովհաննէս Վագասեանի հայրը կաթուածահար եղաւ զաւկին ձերբակալութեան հետևանքով և Մկրտիչ Տ. Ստեփանեանի մէկ աղջիկը տարուան մը հարս՝ հօրը ձերբակալման պատճառով նոյնպէս մեռաւ, ոստիկաններու և փոլիսներու կողմէ նոյն օրը ծեծուած և վախցուած ըլլալով։

Վերջապէս քսանը հինգ հոգի անպարտ արձակուեցան, 3 հոգի ալ վեց ամսուան պատժի ենթարկուած և իրենց ժամանակը արդէն լրացած ըլլալով 25-ին հետ մէկտեղ դուրս ելան և 15 հոգի ալ դատապարտուեցան. այսպէս, Ցաբէթ և Ցակոբ մահուան պատժի [1]), Ցարութիւն Սէմերճեան 15 տարուան բերդարգելութեան, մաս մը 7-ական տարուան, մաս մըն ալ հինգական տարուան։ Դատարանը ասկէ աւելին չէր

1) Արդէն զլխատուած (տես „Դրօշ." N° 1)։

կրնար ընել։ Որովհետև ուղղակի կառավարութեան prestige-ը կար և յետոյ, վերջապէս, այսքան աղմուկով, սարսափով յառաջ եկած դատ մը այլապէս չէր կրնար վերջ գտնել։

Միայն կը հարցնենք թէ իրա՞ւ մարդկութիւնը այնքան գազան պիտի ըլլայ և օտար հիւպատոսները ինչո՞ւ այնքան քարսիրտ՝ թող տալու որ այսքան անմեղութեամբ այս 15 հոգիները իրենց պատիժները կրեն, բայց որմէ՞ սպասենք յոյսը։

Ամերիկեան հիւպատոսը դատին սկիզբէն մինչև վերջը իր թարգմանին և միսիոնար Մր. Պարնմի միջոցով անընդհատ հետևեցաւ բոլոր դատավարութեան, ինչպէս նաև Անգ. հիւպատոսը ատեն մը ուղղակի իր թարգմանին և յետոյ իրեն փոխանորդ Ամերիկ. հիւպատոս Մր. Նորթընի միջոցով խնդրին մօտէն իրազեկ է։ Այս տեղեկութիւնները իրենց դեռ խիստ անկատար մանրամասնութեամբը՝ հաճաձայն Անգլիական և Ամերիկեան հիւպատոսարաններու տեղեկագրութեանց, որոնց կարելի է դիմում ընել հարկ եղած ատեն, աւելի ընդարձակն ու ամբողջականը ունենալու համար։

(Վերջը միւս անգամ)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԱՌՍՏԱՄԵԱՆՑ

(ՄԵՆԱԿ)

Մանուկ հասակից նա սիրեց ազատութիւնը և իր նահատակուած ու կենդանի ընկերների հետ փարեց „Մահ կամ ազատութիւն“ նշանաբանին։

Նա ծնուեց 1882 թուին, Ղարաբաղի Բռասնի գիւղում։ Տասն տարեկան հասակում մտաւ Ղարաբաղի թեմական դպրոցը, ուր և աւարտեց իր դասընթացը 1900 թուին։ Տակաւին աշակերտ՝ նա սկսեց յաճախել յեղափոխական խմբակները։ Իսկ 1900-ին փոխանակ կրթութիւնը շարունակելու, գնաց Բագու, ղեկավարեց զանազան բանւորական խմբեր և քիչ յետոյ անցաւ Ղարսի շրջանը։

Այդտեղ նա երկար ժամանակ գիւղէ գիւղ ընկած՝ քարոզում էր յեղափոխութիւն։ Առաջին օրից իսկ՝ շրջանի հայ ժողովուրդը սիրեց նրան։ Իր անկեղծ զգացումներով, մաքուր ու շիտակ բնաւորութեամբ, ժողովրդի համար մեռնելու պատրաստականութեամբ, քաղցր ու վշտաբուռ երգերով և շանթող ու ոգևորող խօսքերով՝ նա սիրեց ժողովրդից, նրա փայփայած հարազատը դարձաւ։

Սակայն այդ դերը Մենակին չէր գոհացնում։ Նա ձգտում էր դէպի իր երազած վայրը, դէպի Սասունի ժայռոտ ու արիւնոտ լեռները։ Վրէժի զգացումը այրում էր նրա քնքոյշ սիրտը։ Երկար դիմադրել իր այդ զգացումին նա չկարողացաւ։ 1902 թուին երկու շաբաթով միայն այցելեց Սասունը։ Նորից վերադարձաւ Բասեն և ահա 1903-ի աշնանը երբ խանի ձիաւոր խումբը մտաւ Բասեն, հակառակ ընկերների յորդորներին, շտապեց միանալ խմբին։ Այդտեղ նա գտաւ իր վերջին հանգիստը։ Բասենի հայ ժողովուրդը երկար չէր հաւատում նրա մահուան գոյժին։ Հաղար ու մի լուրեր էին պատում նրա մասին, հազար ու մի յոյսեր տածուում։ Եւ դեռ մինչև հիմա էլ ժողովուրդը հաւատում է, որ նա կենդանի է, որ այսօր չէ վաղը կը դառնայ իր սիրած զաւակը։ Բայց նա գնաց ընդմիշտ... Ո՞վ գիտէ, ուր է հանգչում այն սիրուն գլուխը, ուր է սաւառնում այն բանաստեղծ հոգին...

Սիրենք միշտ նրա սիրած գործը և գրանով վառ պահենք նրա յիշատակը։

ԹԻՐԹՕՆ

ՎԱՋՐԻԿ

Նվէր Դումանիին

—

Ահեղ ու անհաւասար կռիւ էր Վանում։

Մենք ստիպուած եղանք բաժանուել իրարից. Վաղգէնը իր ընկերներով մնաց Արարատ թաղում, իսկ ես մի քանի հոգով Այգեստան անցայ։

Հարկաւոր էր մի առ ժամանակ մեր հետքը կորցնել։ Երեք-չորս օրից ի վեր տեղաւորուել էինք ընդարձակ պարտիզի խորքում կծկուած մի փոքրիկ տան մէջ։ Ուշ աշուն էր ու ցուրտ. լայն փալասով ծածկուած քուրսին, թանրի վրայ, տան կենտրոնում՝ հաճելի տեսք ունէր, ջերմութիւնը խիստ սխորժելի էր։ Քուրսու առաջ կուճռուած՝ նստած էր մօտ ութսունամեայ մի ծերունի, սպիտակ երկար միրուքով, որ ոլոր-ոլոր կախուած էր կրծքին. նրա թաւ ու երկար յօնքերի տակ խոր ընկած աչքերը անփայլ էին ու համարեա հանգած։ Գլուխը կրծքին քաշ՝ նա անդադար քաշում էր „տէր ողորմեայի“ սև հատիկները համաչափ շրխկոցով։ Ծերունու կողքին տեղ էր բռնել մի վեց-եօթ տարեկան երեխայ, հիւանդոտ ու գունատ, որ հանդարտ խաղում էր փոքրիկ, բրդոտ կատուի հետ, շոյելով նրա գլուխը, պոչը, թիկունքը։ Տաք ու փափուկ քուրսու վրայ կատուն մըռմըռում էր երջանիկ խաղաղութեամբ։

Տանտիկինը մի ջահիլ այրի էր, որի ամուսինը վաղուց մեզ հետ էր և մի քանի օր առաջ սպանուեց մի ընդհարման ժամանակ։ Գաղտնիքը ծածկել էինք ծերունուց, բայց ջահիլ կինը գիտէր։ Զարդուած ու տխուր, նա այնուամենայնիւ առաւօտից երեկոյ ոտքի վրայ էր՝ մեր պէտքերը հոգալու և իր փոքրիկ տնտեսութիւնը վարելու համար։

Դրսում ցուրտ էր։

Պարզկայ գիշերներից յետոյ պարտիզի ծառերի տերևները թափուել էին և դեղին սփռոցով պատել գետինը։

Մերկ ճիւղերի վրայ դեռ երևում էին հատ-հատ տերևներ, որոնք ցուրտ հովի առաջ թրթռում էին մեղմիկ հեծեծանքով, ապա պոկւում, ֆրֆռալով վար ընկնում՝ այլևս երբեք չբարձրանալու համար։

Վհատեցուցիչ ու անյոյս մի բան կար այդ մերկ ու լալկան ծառերի, այդ գունատ տերևների, նրանց օրհասական, խղճուկ խշշոցի մէջ. ամէնքը կարծես հազիւ լսելի մրմունջով լուռ լալիս էին իրենց մահւան ցաւը գորշ հողի գրկում։

Նոյն մահը ֆշշացող օձերի պէս սողում էր նաև փողոցներում և անխտիր խայթում էր, ում կարող էր։

Մոլորուած գնդակները շաչում էին այս ու այն անկիւնից, ծառերի տակից, պատերի յետևից, շաչում էին և կեանքերը քաղում։

Կռիւ էր, փողոցից՝ փողոց, տնից՝ տուն։

Եւ ամէն անգամ, երբ լսւում էր դրսից մի հրացանի պայթիւն, ծերունին թողնում էր „տէր ողորմեան“, բարձրացնում էր իր ալեզարդ գլուխը, մարած ու միշտ խոնաւ աչքերը երկինք էր ուղղում և մրմնջում.

— Քեռ կամքն ի տէր... մեղա՛յ, մեղա՛յ, ի քեզ տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան, մեղա՛յ, մեղա՛յ“...

Միևնոյն ժամանակ լսւում էր հատ-հատ շների անկանոն ու այլանդակ ոռնոցը, և մայրն ու փոքրիկը նայում էին իրար լռութեամբ։

Փողոցներում անց ու դարձը խսպաւ դադարել էր. տղամարդի երևալը հաւասար էր պետական յանցանքի։ Հազիւ հազ ուրեմն սրտոտ կին համարձակւում էր գլուխ դուրս հանել, տնից տուն անցնել։ Մեզ էլ ընկերներից լուր բերողը միշտ մի կին էր, բայց նա էլ դժբախտաբար չկար երկու օրից ի վեր. ես չգիտէի, թէ ո՞ւր է Վազգէնը, ի՞նչ է անում, քաղաքո՞ւմ է, թէ խ՞ոյս է տուել. անկարող էի նաև իմ անելիքը որոշել։

Անհանգստութիւնը թունաւոր զեռունի պէս կրծում էր հոգիս և ես աչքս չէի կարողանում դրանից հեռացնել։ Էլի մի օր անցաւ, երեկոն մօտ էր արդէն, և ոչ ոք չկար։ Մտածում էի գիշերով դուրս ընկնել ինչ և պատահելու լինէր։

Այս կացութիւնն անտանելի էր։

Իմ մտքերն ընդհատեց դրան ճռռոցը. շէմքի վրայ յայտնուեց ութ-ինն տարեկան մի երեխայ։

— Վազրի՛կը, Վազրի՛կը... կոչեց քուրսու առաջ նստած փոքրիկը, բաց թողեց կատուն ու մնաց բերանաբաց. ծերունին գլուխը չբարձրացրեց։

Դո՞ւն ես Վազրիկ, ասաց ջահիլ կինը անտարբերութեամբ, արի տաքացի, տղաս։

Ես դժգոհ էի. սպասում էի մեր բանբերին և յայտնուեց այս երեխան. ակամայ դժկամակութեան մի հայեացք նետեցի վրան։ Ներս մտնողի փոյթը չէր. նա մի վայրկեան կանգ առաւ դրան առաջ, ուշադրութեամբ մեզ նայեց, ապա համարձակ քայլերով՝ առաջ անցաւ, տեղ բռնեց քուրսու առաջ։

Մտքերս դարձան Վազրիկի շուրջը. այս երեխայի և մեր մէջ մի նմանութիւն կար, նոյն անհանգիստ, արկածալից կեանքը, նոյն կռիւները միայն երեխայական չափով։

Ո՞վ չէր ճանաչում Վազրիկին. նա յայտնի էր ամբողջ Այգեստանում։

Գունատ այտեր ունէր ու հաստ շրթունքներ, որ նա սղմած էր պահում իրար վրայ, երբ սաստիկ պայրացած էր կամ երբ մի չարաճճի միտք ունէր գլխում։ Սև աչքերի վրայ խիստ վար քաշ ընկած յօնքերը նրա հայեացքը դարձնում էին խորամանկ ու քինոտ։ Թւում էր, թէ Վազրիկը միշտ մի չար բան է մտմտում, կամ միշտ ոխ ունի մէկի դէմ։ Նրա վերին շրթունքը շարունակ թաց էր և Վազրիկը ստիպւած էր թեւով յաճախակի սրբել, կամ փնչացնելով վեր քաշել քիթը։

Ես նրան շատ էի տեսել Այգեստանի փողոցներում և սովորաբար միշտ հեւհեւ, քրտնաթոր վազելիս, երբեմն ճանկռւած երեսով, պատառոտած զգեստներով, մերթ գլխաբաց, յաճախ ոտաբոբիկ։ Երբ Վազրիկը այդպէս վազում էր, հաստատ կարելի էր ասել, որ կամ հասակաւոր մէկը հալածում է նրան, կամ ինքն է ընկել մի ուրիշի յետևից։

Նա մշտական պայքարի, անվերջ կռիւների մէջ էր։

Եւ բոլոր այդ կռիւների, բոլոր հալածանքների պատճառը միշտ ինքն էր, Վազրիկը։ Ոչ ոք քարերով նրա պէս շեշտակի չէր հարւածում կատուներին, շներին, հաւերին, փողոցների պատից քաշ ընկած խնձորենիների պտուղներին։

Եւ ամէն մի ձգւած քարից ծագում էր մի կռիւ, մի ծեծ, մի հալածանք։ Ահա թէ ինչո՞ւ Վազրիկն ստիպւած էր անդադար վազել կամ ապաստելու, կամ իր կրած ոնէ վիրաւորանքի համար վրէժխնդիր լինելու համար։ Անթիւ անգամ նա ծեծ էր կերել ուրիշներից, և նոյնքան ծեծ տւել։ Երեսի վրայ էլ տեղ չկար, որ ճանկռւած չլինէր, շրթունքներն ու յօնքերը քարերով պատառոտել էին ու սպիացել, և Վազրիկը շարունակում էր իր արկածալից կեանքը և գոհ էր։

Եթէ ոնէ չարաճճի խաղի համար նրան վիրաւորում էր մի հասակաւոր, Վազրիկը հատուցանում էր իր ուժեղ թշնամու փոքրահասակ եղբօրը կամ որդուն։

Վազրիկը ներել չգիտէր. օրերով ու շաբաթներով կը սպասէր, մինչև հանդիպէր այդ փոքրիկներից մէկնումէկին։ Բռնում էր առաջները փողոցում և հատուցանում էր ճիշդ նոյն չափով՝ ինչ չափով ինքն էր ստացել, մի ապտակ, կամ մի բունցք, ո՛չ աւել, ո՛չ պակաս։ Վրէժխնդրութեան մէջ սա նրա անխախտ սկզբունքն էր։ Հարւածում էր, և իր զոհի առաջին ճիչի հետ՝ նետի պէս առաջ էր ձգւում անյայտանալու համար։

Վազրիկը այծեամի պէս վազել գիտէր և նա միշտ վազում էր...

Եւ ոչ ոք նրա պէս չէր ճանաչում Այգեստանի բոլոր ծակուծուկը, բոլոր անկիւնները, ուր կարելի էր ապաստանել, պատերի այն ցածրիկ մասերը, որտեղից հնարաւոր էր ներս ընկնել պարտէզները, առանց ձեռք ու ոտքը փշտելու։ Նա շատ լաւ ճանաչում էր մանաւանդ այն խուլ, ոլորապտոյտ ու մթին շաւիղները, որոնցով կարելի էր խոյս տալ առանց նկատելու։ Կամուրջներ գիտէր, որոնց տակ կարող էր ամբողջ օրով թագնւել, եթէ հարկ լինէր։

Վանի գաւառօրն էր Վազրիկը։

Եթէ հայ երեխաները նրանից ակնածում էին ու դողում, թիւրք լամուկները նրան ատում էին և սոսկում նրա ներկայութիւնից, որովհետև Վազրիկը տանել չէր կարող, երբ տեսնէր թիւրքին հայի ծեծելիս։ Վերջին դէպքում նա սովորաբար միանում էր նոյնիսկ իր թշնամի հայի հետ հարւածում ընդհանուր թշնամուն։

Այսպէս էր ահա այն երեխան, որ ներս ընկաւ մեզ մօտ։ Ես հաւատացած էի, որ չնայելով քաղաքի այս դժոխային վիճակին նա դարձեալ հնար է գտել մէկին

ծեծել և ապաստանել է այստեղ մինչև մութն ընկնի։

Նա ո՞ւր չէր մտնում...

— Վազրիկ էլի ո՞ւմն ես ծեծել, հարցրի ես ժպտալով, որ խօսակցութեան մէջ մտնեմ և մի կերպ ժամանակս սպանեմ։ Պատասխանի փոխարէն, նա ինձ նայեց խոժոռ աչքերով և քիթը վեր քաշեց ուժգին փնչացնելով։

Վազրիկը պատասխանելու ցանկութիւն չունէր։

Համակերպուեցի և անձնատուր եղայ իմ ծանր մտքերին։ Աէի նայում քուրսու կողմը, ուր չրխկում էր ծերունու „տէր ողորմե"ն, և ուր երկու փոքրիկները քաշքշում էին իրար ու բարձրաձայն քրքջում։ Դրսից դարձեալ մերթ ընդ մերթ լսւում էին հրացանների ձայներ, ծերը ամէն անգամ կրկնում էր իր սաղմոսը, շները ոռնում էին հրէշաւոր ու մահասարսուռ ելևէջներով։ Երեխաները շարունակում էին խաղալ, ըստ երևոյթին մոռացած շրջապատի բոլոր սարսափը։ Ես նայում էի նրանց և մտքիս մէջ կրկնում՝ „երանի՜ քեզ մանկութիւն"։ Խաղի ընթացքում յանկարծ փոքրիկ երեխայի ձեռքը թափով դիպաւ Վազրիկի կրծքին.

— Մ'անե՛, մ'անե՛... ճչաց Վազրիկը կատաղած։ Ես մնացի զարմացած, նրա ձայնի մէջ կար խորին զայրոյթի ու սպառնալիքի շեշտ։ Ընկերը վախեցած՝ ձեռքը յետ քաշեց օձից խայթուածի պէս, կծկուեց ու խեղճացաւ, մինչդեռ Վազրիկը շրթունքներն իրար վրայ սղմած՝ նայում էր նրան չար, անողորմ հայեացքով։ Թւում էր, թէ Վազրիկը կրծքի վրայ մի վէրք ունէր, մի ցաւոտ վէրք, որին ընկերը դիպաւ անզգուշութեամբ ու կսկծացրեց։

Նոյն վայրկենին կատուն վերստին թռաւ քուրսու վրայ. երկու երեխաները մէկէն ձեռքերնին մեկնեցին դէպի կենդանու փափուկ մորթին և սկսեցին քաշքշել։ Կատուն դժգոհեց, ճչաց ու փախաւ, երեխաները ծիծաղեցին բարձրաձայն և մոռացան անախորժ միջադէպը։ Վերստին սկսուեց խաղը, վերստին նրանք քաշքշեցին իրար և յանկարծ էլի մի անգամ լսւեց Վազրիկի ձայնը՝

— Մ'անե՛, մ'անե՛ կ'ասեմ...

Նայեցի. այս անգամ Վազրիկը սարսափելի էր. նա ատամները կրճտում էր, բուռնցքները սղմել էր կատաղաբար, իսկ աչքերից թոյն էր կաթում։ Շշկլուած ու երկիւղից ոչնչացած ընկերը խոհեմութիւն համարեց քաշուել քուրսու միւս ծայրը. անգամ մեր ներկայութեամբ նա վախենում էր Վազրիկից։

Երեխաների խաղն էլ չվերսկսուեց. գլուխները քաշ ձգած՝ նրանք իրար էին նայում գաղտագողի կերպով և լուռ էին։ Կատուն այժմ համարձակ բարձրացաւ քուրսու վրայ, տեղաւորուեց իր ուզածի պէս և հանդարտ մրմնջում էր։ Ծերունին վաղուց հետէ նիրհում էր նստած տեղում և նրա „տէր ողորմեայի" ձայնը դադարել էր։ Տանտիկինը գլուխը քաշ ձգած՝ հանդարտ կարկատում էր մի հնոտի, մերթ ընդ մերթ կրկնելով՝ „խա-խամիտ կացէք, տղէկներ"։ Ես նկատեցի, որ Վազրիկը մի քանի անգամ լուսամուտին նայեց. ըստ երևոյթին նա անհանգիստ էր։ Երեկոն վրայ հասաւ. առաջին ստւերները կախուեցին և տունը կամաց-կամաց մթնեց։ Տանտիկինը կարը ցած թողեց, վերկացաւ. ճրագ վառելու. լամպը դատարկ էր, վերցրեց, գնաց ներքնատուն նաւթ ածելու։ Որդին հետևեց նրան, Վազրիկից նա խոյս էր տալիս, թեկուզ մի քանի րոպէով։

Նոյն վայրկենին Վազրիկը գող կատուի պէս շուրջը նայեց, տեսաւ խռմփացող ծերունուն, թռաւ տեղից շտապով, վազեց դէպի ինձ, ծունկ չոքեց առաջս և կուրծքը դէմ տալով՝ փսփսաց.

— Քակի՛ր, էսա տեղ բան կայ։

Հասկացայ. սիրտս թունդ և հիացմունքով լի դէպի այս փոքրիկ զինուորը, դողդոջուն ձեռներով քանդեցի նրա կոճակները և կրծքի վրայից դուրս հանեցի նամակներ, „Դրօշակ" և այլ կարևոր թղթեր։

— Վազգէնը տուեց, կրկին փսփսաց նա, սուր աչքերը վրաս յառած։

Վազգէնի բանբերն էր թափառական, արկածախնդիր Վազրիկը։

Սքանչելի՜ մանուկ։

Աչքերս յուզմունքի արցունքով լցուեցին. գրկեցի նրա փոքրիկ անհանգիստ գլուխը, սղմեցի կրծքիս և պինդ պինդ համբուրեցի։ Ահա թէ ինչո՞ւ այս կայտառ, կենդանի երեխան ժամերով ինքն իրեն դատապարտել էր նստել քուրսու առաջ, սովորութեան հակառակ յանձն էր առել խաղալ մի հիւանդ, թոյլ երեխայի հետ, ահա, թէ ինչո՞ւ էր զայրանում, երբ ընկերը դիպաւ նրա կրծքին ուր նա կրում էր բոլոր ցաւերից ամենանուիրականը, յեղափոխական փրկարար ու վսեմ գաղտնիքը։ Նրան պատուիրել էին թղթերը յանձնել ինձ, երբ տանը մեզանից դուրս ոչ ոք չէր լինի։ Եւ նա սպասում էր համբերութեամբ։

Տանտիկինը ներս եկաւ։

— Վազրիկ գնո՞ւմ ես։

Հա՛, ի հարկէ, նա գնում էր. նա արդէն դրան առաջն էր. պատասխան անգամ չտուեց, բացեց դուռը և դուրս ընկաւ, կորաւ խաւարի մէջ։

Ա՜յն դուրսը... ցուրտ էր, մռայլ ու ահաւոր։ Հրացանների ձայները սաստկացան. շներն աւելի ողբաձայն և աւելի բարձր ոռնալ սկսեցին. ծերունին ընդոստ վեր ցատկեց քնից և երեսը խաչակնքեց։

Վազրիկը գնա՜ց... այն արիասիրտ, դիւթական մանուկը, որ ոչնչից չէր վախենում։

Վազգէնը գրում էր ինձ, որ չշարժուեմ իմ թագստոցից և սպասեմ իր յաջորդ նամակներին։ Եւ այնուհետև նամակները գալիս էին կանոնաւորապէս Վազրիկի ձեռքով. փոքրիկ բանբերը ամենայն օր, նոյն ժամերին, նոյն ձևով ներս էր մտնում, կուրծքը միշտ խնամքով կոճկած, միշտ զգոյշ ու լուրջ։ Տանեցիներից մենք գաղտնիք չունէինք, բայց Վազրիկը մինչև վերջ յամառում էր իր ծայրայեղ զգուշութեան մէջ և նրանց ներկայութեամբ չէր համաձայնում կուրծքը բանալ։ Նրա այդ սիրուն քմահաճոյքը կատարած լինելու համար իմ խնդրով տանտիկինը իր փոքրիկի հետ ուրիշ պատրուակով դուրս էր գնում, հենց որ Վազրիկը յայտնւում էր։ Ծերունին շատ լաւ չէր տեսնում, այդ գիտէր Վազրիկը և նրանից էր քաշուում. իրեն բոլորովին ապահով զգալով՝ նա շտապով մօտենում էր ինձ, չոքում էր առաջս և կամացուկ կրկնում էր իր սովորական նախադասութիւնը, ցոյց տալով կուրծքը։

—Քակի՛ր, էսա տեղ բան կայ։

Թղթերը հանում էի և նա կրկին անյայտանում էր, կրծքի վրայ փոխադարձապէս տանելով իմ նամակները Վազգէնին ուղղած։

Եւ մի երեկոյ նա սովորականից շատ ուշացաւ։ Մութն ընկաւ, ճրագը վառուեց, բայց Վազրիկը չկար դեռ ևս։ Ամենքս էլ լուռ էինք և անհանգիստ, մենք այնպէս սովորել էինք նրան տեսնել որոշ ժամերին։ Խրճիթը իր

մութ ստուերներով այդ երեկոյ մեզ ճնշում էր։ Լռութեան մէջ անախորժ էր հնչում նոյնիսկ ողորմելի կատուի սովորական մռռոցը և ծերունու „տէր ողորմեայի“ չորբլիկոցը։ Սիրտս լի էր մութ թախիծով և ես սկսեցի անդադար քայլել յետ ու առաջ։ Դեռ երբէք դրսի խաւարը այս աստիճան խեղդող, այս աստիճան ահաւոր չէր թուացել ինձ. կարծես մի մութ ու սև բան, դանդաղ, հրէշաւոր գալարումներով օղակ-օղակ պտտում էր մեր շուրջը թանձր խաւարի հետ, սպառնալով խեղդել, ոչնչացնել մեզ։

Հոգիս ցաւում էր անորոշ ու սև կասկածներից։

Յանկարծ մի ուժգին պայթիւն լսեց հէնց մեր փողոցում։ Ամէնքս վեր թռանք, խլեցինք հրացաններս, ականջներս ձայնին պահելով։ Եւ նոյն վայրկենին դուռը չրխկոցով բացուեց և ներս ընկաւ Վազրիկը գունատ, աչքերը չռած, դէմքի վրայ անհնարին ցաւի կնիք, շրթունքները իրար սղմած՝ ասես չճչալու համար։ Առանց ներկայ եղողների վրայ ուշք դարձնելու, և մոռացած իր սովորական զգուշութիւնը, նա ուղիղ դէպի ինձ վազեց, ծնկների վրայ ընկաւ և հեւալով ու նուաղած շշնջաց.

— Քակի՛ր, էսա տեղ բան կայ։

Մինչև ես ձեռքս կ՚երկարէի դէպի կուրծքը, նա անկարող եղաւ չոքած մնալ, և ընկաւ թիկունքի վրայ, աչքերը կիսախուփ, դէմքը գունատ, ինչպէս մեռել։ Շտապեցի բաց անել կուրծքը։

— Մ՚անե՛... մ՚անե՛, մ՚ան... հեծեծացին նրա շրթունքները։

Վազրիկի կուրծքը այս անգամ իրօք ցաւում էր, այնտեղ մի չար գնդակ էր նստած։ Կրծքի վրայից զգուշութեամբ հանեցի ծակոտած ու արիւնոտ թղթերը, և նրանց տակ բացուեց լայն վէրքը, որից ծորում էր արիւնը։

Էլի երկու փոքրիկ ցնցում, մի թեթև խռխռոց և նա խպառ լռեց, այն սքանչելի մանուկը։ Վազրիկը իր վերջին շունչը փչեց։

Ծերունին հասկացաւ, ոտքի կանգնեց իր տեղից, բայց ընկաւ, և ծնկների վրայ սողալով մօտեցաւ փոքրիկ նահատակին, մի ձեռքով նրա աչքերը փակեց և մի ուսով շօշափեց, գտաւ վէրքը, ապա խռպոտ ձայնով հեկեկաց ծերի սպանիչ արցունքով. տանտիկինը սարսափած՝ իր փոքրիկին գրկեց, կարծես մի մութ վտանգից ազատելու համար և նոյնպէս հեծկլտաց։ Երկու հրացան բերինք, խաչաձև դրինք նահատակի կրծքին և գլուխներս բանալով՝ ծունկ չոքեցինք նուիրական դիակի առաջ։ Ճրագի լոյսը պլպլում էր մեղմիւ, մեր ստուերները խաղում էին մեռելի շուրջը ոգիների պէս, և մենք կատարում էինք հսկումներից վերջագոյնը։

Յանկարծ ծերունին ոտքի կանգնեց իր չորացած հասակի ամբողջ բարձրութեամբ, կարծես երկնքին աւելի մօտ լինելու համար, արիւնոտ ձեռքերը տարածեց դէպի վեր, դողդոջուն ձայնով բացականչեց.

— Տէ՛ր, տ՚էր, քո զաւակի արիւնը համարիր... Փրկութեան արիւն... տե՛ս, ի՞նչ մաքուր է, ի՞նչ կարմիր...

Մեր մահամուռ և ուժգին հեծկլտոցը խլացրեց ծերունու ձայնը. նա ծնկների վրայ ընկաւ նորէն դիակի առաջ։ Նոյն վայրկենին դրսում նոր հրացաններ որոտացին, մենք շրջապատուած էինք։ Զէնքերնիս խլեցինք և դուրս ընկանք խաւարի մէջ։

Բոլոր Վազրիկների անբիծ արեան սիրուն՝ կռիւ էր պէտք։

Եւ կռիւն սկսուեց...

ՂԱՐԻԲ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(ՀԱՄԱՌՕՏԱԾ „ԴՐՕՇԱԿ“Ի ՅՈՒՆՈՒԱՐԻ ԵՒ ՓԵՏՐՈՒԱՐԻ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐԻՑ)

ԳԱՊՕՆԻ ՆԱՄԱԿԸ

Պետերբուրգի վերջին շարժման յայտնի ղեկավարը Գէորգի Գապօնը՝ նախկին քահանայ, ուղարկել է մեզ հետեւեալ նամակը, „Դրօշակի“ մէջ հրատարակելու համար, որը եւ շտապում ենք կատարել մեծ սիրով, խորապէս համաձայն նրա բովանդակութեան եւ հասակիր նրա կոչին։

Յունուարեան արիւնահեղ օրերը Պետերբուրգում և մնացած Ռուսաստանում՝ դէմ առ դէմ կանգնեցրին ճնշուած բանուորական դասակարգը և միահեծան ըէժիմը՝ որի գլուխն է արիւնարբու ցարը։ Ռուսական մեծ յեղափոխութիւնը սկսեց։ Բոլոր նրանք, որոնց համար իսկապէս թանկ է ժողովրդական ազատութիւնը, պիտի յաղթեն կամ պիտի մեռնեն։ Դիտակից՝ պատմական արդի մօմէնտի կարևորութեան, լինելով, իրերի այժմեան դրութեան մէջ, ամէնից առաջ՝ յեղափոխական և գործի մարդ, ես հրաւէր եմ կարդում Ռուսաստանի սոցիալիստական բոլոր կուսակցութիւններին՝ անմիջապէս յարաբերութեան մէջ մտնել միմեանց հետ և ծեռնարկել զինուած ապստամբութեան գործին՝ ընդդէմ ցարիզմի։ Ամէն մի կուսակցութիւն պէտք է սպառազինի իր բոլոր ուժերը։ Ռազմային գործնական յատակագիծը բոլորի համար ընդհանուր պէտք է լինի։ Ռումբ և դինամիտ, տէոոր՝ անհատական և խմբային։ Մերձաւոր նպատակը—միապետութեան տապալում և ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւն, որը անմիջապէս ներում կը յայտարարէ քաղաքական և կրօնական ազատութեան բոլոր մարտնչողներին, իսկոյն և նոր կը զինէ ժողովուրդը և կը գումարէ հիմնադրական ժողով՝ ընդհանուր, հաւասար, գաղտնի և ընտրողական ձայնատուութեամբ։

Դէպի՛ գործ, ընկերներ։ Յառա՛ջ, դէպի կռիւ։ Կրկնենք Պետերբուրգի բանուորների յունուար 9-ի նշանաբանը—ազատութիւն կամ մահ։ Ներկայ բոպէներին՝ ամէն մի ծգծգում և շփոթանք՝ ոճիր է այն ժողովրդի հանդէպ, որի շահերն էք պաշտպանում դուք։ Նուիրելով իմ բոլոր ուժերը այն ժողովրդի գործին, որի ծոցից ես ինքս դուրս եմ եկել (գիւղացու որդի), ամբարձրէն կապելով իմ վիճակը այն պայքարի հետ, որ մղում է բանուոր դասակարգը ճնշողների

և հարստահարողների դէմ, ես ընկանաքար իմ ամբողջ սրտով և հոգով կը լինեմ նրանց շարքերում, որոնք կը զբաղուեն պրոլետարիատը և աշխատաւոր ամբողջ մասսան կապիտալիստական ճնշումից և քաղաքական ստրկութիւնից ազատելու իրական գործով։

ԳԷՈՐԳԻ ԳԱՊՕՆ

17 փետր. 1905

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պետերբուրգ, 20 յունուարի

Գործադուլին մասնակցող բանուորական բոլոր խմբերը պատրաստել են մի խնդրագիր՝ ուղղած կայսրին, որով պահանջում են՝ վերջ տալ անարդար ճնշումներին, ապագաբնակութեան վրայ ծանրացած թշուառութեան, ինչպէս և կապիտալիստների հարստահարութեան։ Բանուորների գլխաւոր պահանջները հետևեալներն են՝ 1. Ընտրի ապահովութեան երաշխաւորութիւն։ 2. Խօսքի ազատութիւն, հաւախմբելու իրաւունք, խղճի ազատութիւն։ 3. Պարտադիր ուսում՝ պետութեան ծախքով։ 4. Ժողովրդական ներկայացուցչութիւն, գաղտնի ընտրողութեամբ։ 5. Մինիստրների պատասխանատուութիւն։ 6. Հարկային սիստէմի հիմնական բարեկարգում։ Խնդրագիրը յատկապէս բանուորների համար պահանջում է՝ 8 ժամեայ աշխատանք և բանուորների ապահովագրութիւն։

Պետերբուրգ, 20 յունուարի

Գործադուլը և յուզմունքը արագօրէն տարածւում են։ Ոսն, Գալլի, Կալիքկին և այլ շատ գործարաններ փակուեցին։ Մտաւորական շրջանները մասն ունեն շարժման մէջ։ Լուր կայ, որ 100 հազար բանուորներ պատրաստում են մի ցոյց՝ պալատի դիմաց. բանուորական մի ուղերձ՝ ուղղած թագաւորին, վերջանում է այս խօսքերով. „Խղճացիր մեզ, թող որ ապրենք եթէ դու մեզ պահես այժմեան վիճակի մէջ, մենք գերադասում ենք մեռնել“։ Հաստատւում է, որ Յունուարի 9-ի Ձմերային պալատի վրայ թնդանօթ արձակելը քաղաքական բնոյթ ունի։

Պետերբուրգ, 22 յունուարի

Ուրաւօտեան 10 ժամին, 15 հազար բանուոր, հագին խումբ կազմած, շարժուեցին դէպի քաղաքի կենտրօնը, սակայն հագին զօրախումբը՝ հանդէպ դուրս գալով, փորձեց արգելել։ Կազակների մի վաշտ, սրերը քաշած, յարձակում գործեց։ Բանուորները փոքրիկ խմբերով շարունակում են գնալ դէպի կենտրոնական կէտերը։ Տների դռները փակ են։ Շատ տներում, ներքին յարկի պատուհանները տախտակով ամրացրած են։ Շարժումը սպառնական կերպարանք է առնում։ Մի քանի թաղերում երթևեկութիւն չկայ այլևս։ Կամուրջները բռնուած են զօրքով։ Ցերեկուայ 12 ժամին Ձմերային պալատը տանող գլխաւոր անցքերը ամբողջապէս բռնուած էին։ Ուէբ-սանդրեան այգու մօտ զօրքը բանուորական խմբի առաջը կարեց։ Գապօնի, երկու հոգևորականների ուղեկցութեամբ, երևաց պալատական հրապարակի վրայ, որը բանուորների ժամադրավայրն էր նշանակուած ժամը 2-ին։ Շարքերը ստուարանում են։ Կէսօրից 50 րոպէ անցած՝ զօրքը հրաման ստացաւ առաջ քայլել։ Հեծելազօրքը սրերով յարձակում գործեց մօտ 10 հազար ամբոխի վրայ։ Շատ վիրաւորներ կան։ Յուվէրսկի հրապարակի վրայ զօրքը երեք անգամ հրացան արձակեց դէպի բանուորները։ Գործեալ բաւականաչափ վիրաւորներ։ Ամբոխի գրգռումն ահագին է։ Ուղիղ ժամը 2-ին, ահագին բազմութիւնը շարժուեց դէպի Ձմերային պալատը՝ ներս խուժելու և ուղերձ տալու մտադրութեամբ։ Զօրքը հրացանի բռնեց առաջին կարգերը։ 150 հոգի սպանուած, բազմաթիւ վիրաւորներ։ Սրան հետևեց խոշոր ընդհարում զօրքի և բանուորների միջև։ Կէս ժամ յետոյ ամբոխը քաշուեց հրապարակից, և զօրքը շարունակում էր հալածել անզէն խուժանը, անգութ խստութիւնով։ Արիւն և դիակներ շատ փողոցներում։ Ամբոխը թշնամական ցոյցեր է անում օֆիցէրների դէմ։ Բանուորները վճռել են դիմադրութիւն ցոյց տալ Վասիլեվսկի-Օստրովում, ուր բարիկատներ են շինած մի քանի կէտերում։ Վիրաւորները աւելի շատ են, քան կարծում էին։ Գապօնին նոյնպէս վիրաւորած է։ Լուր է պտտում, որ սպանուածների թիւը 2 հազարից անցնում է։ Զօրքը կոտորած է անում։

Պարիզ, 23 յունուարի

Ցարը Ձմերային պալատումը չէ և շարժման սկզբին արդէն փախել էր Ցարսկօէ-Սէլօ։ Լուր եկաւ, որ կիրակի երեկոյեան ցարը այնտեղից էլ փախուստ տուեց։ Կարծում են, որ կայսրը և կայսրուհին իրենց երեխաներով վճռել են հեռանալ Պետերբուրգից, յեղափոխական փոթորիկներից ազատ մնալու համար։ Կարծողներ կան, որ Նիկոլայ Բ. կ ապաստանի Լիվադիա, կամ գուցէ և փախչի արտասահման։ Մի քանի թղթակիցներ պնդում են, որ սպանուածների թիւը 2,500 է, իսկ վիրաւորուածներինը 8 հազարից աւելի։ Պաշտօնական շրջաններում թագցնում են իրողութիւնը և ուզում են հաւատացնել, որ սպանուածների թիւը 500-ից չէ անցնում։

Պետերբուրգ, 23 յունուարի

Արտաքսիկ են տեսարանները։ Կանայք և երեխաներ ողբում են իրենց նահատակ ամուսիններն ու ծնողները։ Ընթիւ տների մէջ տիրում է սուգ։ Հասարակութիւնը միաբերան յանդիմանում է կառավարութիւնը, որ շնորհիւ իր անընդունակութեան և բիրտութեան, խաղաղ ցոյցը դարձրեց ապստամբութիւն և ապա կոտորած։ „Կորչի՛ միապետութիւնը, կորչի՛ պատերազմը“, հնչում է ամէն կողմից։ Այսօրեան օրը մի անկում է կառավարութեան և զօրքի համար։ Շատ տեղ զինուորները հրացանի բռնեցին ժողովրդին՝ առանց նախօրօք զգուշացնելու։ Գրանսիական գեսպանատան առջև մի խումբ անցորդներ՝ կանգնեցրին մի օգոստափառ անձնաւորութեան կառքը, գոչելով „Արդարադատութիւն, ծունկ չոքիր և ներողութիւն խնդրիր“։ Օգոստափառ անձը հազիւ կարողացաւ փախուստ տալ, երեսի թուքը սրբելով։ Մեծ իշխանները փախել են մայրաքաղաքից և ապաստանել Ցարսկօէ-Սէլօ։ Պալատական շրջաններում երկիւղն ու ահը անսահման է։

Պարիզ, 24 յունուարի

„Ստանդարտ“ նաւը պատրաստ կանգնած է ցարին և իր ընտանիքին, հարկաւոր դէպքում, կօպէնհագէն փոխադրելու համար։ Պետերբուրգում չգիտեն թէ իսկապէս որտեղ է գտնւում կամ ո՞ւր է թագնուած Նիկոլայ Բ.։ Մի քանի օր պալատից պալատ թափառելուց յետոյ՝ թագաւորը այսօր առաւօտեան անսպասելի կերպով մեկնեց Ցարսկօէ Սէլօյից։ Ասում են, որ մտադիր էր ապաստանել Պետերհօֆ, բայց մայրը խորհուրդ տուեց գնալ Գատչինօ։ Յեղափոխական շրջաններում՝ Գատչինօ փախչելը համեմատում են Լուի XVI-ի Վարէն փախչելու հետ։

Բերլին, 26 յունուարի

Պետերբուրգի քաղաքային խորհուրդը վճռեց 25 հազար ռուբլի յատկացնել զոհերի ընտանիքներին։ Դա հավաքում է յանդիմանություն կառավարության հասցեին։ — Ցուցմունքը այժմ բանտարկյալներից և ամբոխից անցել է այլ շրջաններ։ Պրոֆէսորների, գրողների, ինչպէս և փաստաբանական շրջաններում դժգոհությունը ծայրայեղ է։ Դոյնիսկ կառավարական շատ պաշտօնեաներ բացարձակ արտաքին է յայտնում կատարող բռնությունների դէմ։

Լոնդոն, 27 յունուարի

Գեներալ Տրէպովի նշանակումը՝ իբրև Պետերբուրգի քաղաքապետ, բացարձակ իրաւունքով, ծանր տպաւորություն թողեց։ Նա հավաքում է ընդունակ վերսկսելու Պլէվէի արարքները։ Տրէպով՝ մեծ-իշխանների պաշտպանեալն է և լիազօրություն է ստացել՝ ամէն ինչ անել՝ թագաւորական տունը փրկելու համար։ Հաստատած Ձմերային պալատի մէջ՝ նա փոքրիկ-ցար է մայրաքաղաքի համար։ Ներքին գործերի մինիստրի իրաւունքները՝ խլած և նրան են տրուած։ Տրէպով յայտարարեց, որ ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնի։ Արդէն մի քանի հազար ձերբակալություններ կատարեցին։ Բռնված են յայտնի գրողներ, որոնց թվում Գորկի և Աննենսկի, պրոֆէսորներ, իմիջի այլոց՝ Պարէվ, Հեսսեն։ Մայրաքաղաքից աքսորեցին շատերը։ Դոյնիսկ բարձր հասարակության մէջ սարսափ է տիրում։ Տրէպովի շնորհիւ՝ իշխան Սվեատոպոլկ Միրսկու դէմ նկատուում է մեծ թշնամություն։ Պալատական շրջանների կարծիքով՝ այս բոլորը Միրսկու ազատամիտ քաղաքականության արդիւնքն է։ Մեծ-իշխանների խումբը ամէն միջոց գործ է դնում, որպէս զի ուժէ զիջումն չ՝անի ժողովրդական պահանջներին։ Որոնում՝ են ներքին գործերի նոր մինիստր՝ Պլէվէի ոգով։ Մեծ-իշխան Վլադիմիր սպառնացել է պալատական յեղափոխություն անել, եթէ Նիկոլայ Բ. թեքվի ազատամիտ ծրագիրների կողմը։

Պարիզ, 27 յունուարի

Մոսկվայի մէջ ոստիկանությունը կպցրեց պատերին ազդեր, որոնց մէջ ասված է, թէ ներկայ խառնակությունները առաջ են բերել անգլիական գործակալները, հապճեպական փողերով։ Այդ զրպարտության նպատակն է գրգռել ռուս ամբոխը և դարձնել նրա ուշադրությունը դէպի այլ կողմ։ Դոյնպիսի թղթեր կպցրած են մի քանի այլ քաղաքներում։ Վարշավայում՝ անգլիական փոխ-հիւպատոսը վիրաւորուեց մի զինուորի ձեռքով։ Անգլիական արտաքին գործերի մինիստր Լորդ Լանսդաուն հեռագրով, ուղղած իրենց դեսպանին՝ Պետերբուրգ, բողոքեց ռուսաց կառավարության այս անօրինակ վարմունքի դէմ։ Դեսպանը այդ հեռագիրը յանձնեց Պետերբուրգի կառավարության, աւելացնելով մի քանի սպառնալիքներ։ Պետերբուրգից կարգադրություն ուղարկուեց գաւառները՝ ոչնչացնել այդ տեսակ ծանուցումները։ Դրա հետ միասին ռուսաց արտաքին գործերի մինիստրությունը լուր է տարածում, որ ռուսաց յեղափոխական, ազատամիտ և սոցիալիստական կուսակցությունները ստացել են հապճեպական կառավարությունից 18 միլիոն, ներքին խառնակություններ առաջ բերելու համար։ Հասարակությունը այդ լուրերին կարևորություն չի ընծայում։

Հելսինգֆորս, 27 յունուարի

Զորեքշաբթի երեկոյեան, 5,000 բանտարկյալներ մի ցոյց կազմակերպեցին։ Ոստիկանությունը յարձակում գործեց։ Շատ վիրաւորուածներ կան։

Սարատով, 30 յունուարի

Շաբաթ օր, Սարատովի գիմնազիայի և բէալական դպրոցի աշակերտները հրաժարուեցին ներկայ լինել դասերին։ Եւ երբ նրանք հեռանում էին դպրոցից, կազակները նրանց շրջապատեցին և սկսեցին մտրակներով ծեծել։ Քաղաքացիները անմիջապէս ժողով գումարեցին և բողոքեցին նահանգապետին՝ պահանջելով, որ աւելի մարդավարի կերպով վարուեն երեխաների հետ։

Կրակով, 4 փետրուարի

Արիւնահեղ կռիւներ ռուսական Լեհաստանում։ Լեհական շարժումը միանգամայն տարբեր է Պետերբուրգի ու Մոսկվայի անցքերից. — նա կազմակերպուած է Լեհ Սոց. Կուսակցության ձեռքով և կրում է զուտ քաղաքական բնաւորություն։ Բացի այդ՝ լեհերը ցոյց են տալիս յաճախ զինուած դիմադրություն։ Շարժման անմիջական նպատակն է՝ ձեռք բերել լեհական պարլամենտ ընտրուած ընդհանուր, հաւասար ձայնատուությամբ։ Ընդհանուր, համատարած գործադուլ է. հասարակական բոլոր հիմնարկությունները փակուել են։ Հաղորդակցությունը դադարել է։ Բանտարները աւերումներ են գործում։ Համալսարանում ևս ընդհանուր „գործադուլ“ է, — ուսանողները միաբերան պահանջում են լեհական լեզուի ներմուծումը։ Ցոյցերն ու ընդհարումները յաջորդում են իրար Վարշաւա, Բագոմ, Լոձ և ուրիշ կենտրոններում. հարիւր հազարաւոր պրոլետարիատը ոտքի է կանգնել. սպանուածների և վիրաւորների թիւը արդէն հաշուում են հարիւրներով։

Հելսինֆորս, 6 փետրուարի

Այսօր սպայի զգեստ հագած մի մարդ սպանություն փորձ արեց Ֆինլանդական Սենատի պրոկուրոր՝ Ջոնսոնի վրայ, վերջինիս բնակարանում։ Պրոկուրորը անմիջապէս մեռաւ։ Նրա որդին ևս վիրաւորուեց։

8 փետրուարի

Բելգիական լրագիրներին հաղորդում են Պետերբուրգից, որ յունուարի 26-ին ոստիկանությունը թաղել է տեղական գերեզմանատանը սպանուածների դիակները, որոնք փոխադրել էին 26 վագոններով։

Պետերբուրգ, 8 փետրուարի

Զինուորական բժշկական Ակադէմիայի ուսանողները, միաբանելով միւս բարձրագոյն դպրոցների պրոֆէսորների և ուսանողների հետ, միաձայն որոշեցին, որ անհնարին է շարունակել ուսումը, քանի դեռ ոստիկանությունը պահպանում է իր բացառիկ լիազորությունները։ Ուսանողները պահանջում են փակել Ակադէմիան, մինչև չվերանան խոշընդոտները։

Թիֆլիս, 9 փետրուարի

Բաթում. — դրությունը մնում է անորոշ։ Երկաթուղու բանտարները գործադուլ արին։ Իշխան Գուրիէլի, ոստիկանության բարձր պաշտօնեայ, սպանուեց օր ցերեկով։

Թիֆլիս. — երկաթուղու բանտարների, զանազան գործարանների ու տպարանների գործադուլը, որ յայտարարած է Յունուարի 31-ին, շարունակում է տակաւին։

Երևան. — Սպանության փորձ եղաւ գաւառապետի օգնականի վրայ։

Պարիզ, 9 փետրուարի

Վոլկովիսկում տեղի ունեցաւ կռիւ 3,000 պահեստի զինուորների և զօրքի միջև։ Կան բազմաթիւ սպանուածներ։

Պետերբուրգ, 10 փետրուարի

Բազմաթիւ ուսանողներ հաւաքելով գերեզմանատանը, ուր թաղուած են յունուարի 22-ին սպանուած ուսանողներն ու բանւորները, երդուեցին վրէժխնդիր լինել անմեղ զոհերի համար։ Այդ երդումից յետոյ ուսանողները ձերբակալուեցին։

Պարիզ, 12 փետրուարի

Քութայիսում գիմնազիայի և առևտրական դպրոցի աշակերտները դիմագրաւեցին իշխանութիւններին և հոգևոր դպրոցի աշակերտները թև տուին նրանց։ Իշխանութիւնները ստիպուած եղան փակել դպրոցները։ Բաթումում, գիմնազիայի մի խումբ աշակերտներ հրապարակով պատռեցին թագաւորի պատկերը։ Զօրքեր կանչուեցին և հրացանների մի զալպով ցրուեցին ցուցարարներին։ Մասնակի պաշարման դրութիւն է հրատարակուած Քութայիսում։

Թիֆլիսի առաջին և երրորդ գիմնազիաները, բնական և վաճառականական դպրոցները փակուած են։ Իսկ երկրորդ գիմնազիայում միմիայն ստորին դասարանների աշակերտներն են յաճախում դպրոց։ Առաջին գիմնազիայի պատուհանները ջարդուել են. բոլոր այդ հիմնարկութիւնների աշակերտները յատուկ թռուցիկներ են հրատարակել և առաջադրել են իրենց պահանջները։

Պետերբուրգ, 17 փետրուարի

Մեծ իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ սպանուեց Մոսկուայում ռումբի հարուածով. կառքը փշրուեց ռումբի պայթիւնից և մեծ իշխանի մարմինը երեք մասի բաժանուեց։ Երկու տէռորիստները, որոնցից մինը ծանր վիրաւորուած է, ձերբակալուեցին։ Մէկը նրանցից գոչեց. „Ինչ կուզէ, թող լինի, ես իմ գործը կատարեցի“։ Նա յայտարարեց, որ պատկանում է սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան։

ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Պարիզ, 10 փետրուարի

Անթիւ ու բազմամարդ միտինգներ են գումարուում բոլոր քաղաքակիրթ երկրների մէջ, յօգուտ Ռուսաստանի կռուողների։ Ցոյցեր եղան նոյնիսկ պարլամենտներում՝ Պարիզ, Հռովմ, Վիեննա։

Բերլին, 10 փետրուարի

Երէկ երեկոյեան Բերլինում և արուարձաններում սոցիալիստները 21 ժողովրդական միտինգներ կազմեցին, բողոքելու համար Պետերբուրգի կոտորածների դէմ և յայտնելու գերմանական բանւորների համակրանքը Ռուսաստանի բանւորներին։ Հռետորները մեծ մասամբ Ռայխստագի անդամներն էին։

Պարիզ, 10 փետրուարի

Յունուարի 27-ին Տիվոլի սրահում գումարուած 5,000 բազմութեան առաջ հռչակաւոր գրող Անատոլ Ֆրանս արտասանեց ճառ, որից քաղում ենք հետևեալ կտորը.

„Չը պէտք է պատմեմ ձեզ, թէ ինչպէս ցարը հրամայեց կոտորել մարդկանց, որոնք յանցաւոր էին միայն նրանով, որ սովից ու թշուառութիւնից հիւծուած, յուսահատութեան մէջ դիմել էին նրան, որպէս իրենց հօրը։ Նրանց որդիական աղերսանքներին ու արտասուքներին նա պատասխանեց իր կօզակների նագայկաներով և զինուորների գնդակներով։ Այդ գնդակները դիպան իր սեփական լուսանկարին։ Այդպիսով՝ հակառակ իր կամքի՝ ցարը սպանեց ցարին, սպանեց ցարիզմը։ Այն արիւնից, որ կարմրեցրեց Նեվայի սառոյցը, դուրս կրգան միլիոնաւորներ, որոնք կը հանեն ընկածների վրէժը։ Ցարը սպանեց ցարին, ցարը յարուցեց յեղափոխութիւն, որը կը կլանէ ցարիզմը։ Նիկոլայ Ալէքսանդրովիչ այլևս գոյութիւն չունի և նրա յիշատակը յաւիտեան մատնուած է ամբողջ աշխարհի նզովքին“։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Վերջին հեռագիրները՝ ստացուած Բաքուից, հաղորդում են անախորժ, ծանր լուրեր հայերի և մահմեդականների ընդհարումների մասին։ „Միւսիւլմանները յարձակուեցին հայերի վրայ—ասում է այդ հեռագիրներից մէկը—փողոցում ընդհարումներ շարունակուում են. սարսափահար ժողովուրդը փակում է խանութները. հրդեհուեցին շատ խանութներ, մի քանի թաղեր թալանի ենթարկուեցին“։ Ամենավերջին հեռագիրը, որ ասւում է, թէ „գործը անգոր է կարգը վերահաստատելու“ — պէտք է համարել ստայող և թելադրուած կառավարչական աղբիւրներից։ Մենք հաստատ տեղեկութիւն ունենք, որ ինքը կառավարութիւնը վաղուց ի վեր ամէն տեսակ ճիգ էր թափում կուռեցնել հայերին թիւրքերի հետ, և այդ ոչ միայն Բաքու, այլ և Շուշի, Երևան, Գանձակ։ Ռուսաց ռասիկանութիւնը ինքն էր, որ փորձեց զէնք բաժանել ինչպէս ռուս զաղթականներին, այնպէս և Բաքուի թիւրք խուժանին՝ հայերի վրայ յարձակում գործելու համար, և այդ դէպքում՝ պարզ է, որ թէ „գործը և թէ ռասիկանութիւնը անգոր կը լինի կարգը վերահաստատելու“։ Ցարի գործակալների այդ վարմունքը անպատիժ չի մնայ։ Հայ-մահմէտական յարաբերութիւնները, այս ուներնք, Բաքուում կը պարզուեն և խաղաղ յարաբերութիւնը կը վերահաստատուի, և այն ժամանակ ցասման և վրէժի շանթը կը դառնայ դէպի այն պաշտօնեաները, որոնք լուութեան մէջ դաւեր են լարում, ստոր և նենգամիտ դաւեր...

*

Փետրուար 13-ին Լօնդոնի մէջ, Մակեդոնիոյ կացութիւնը քննելու մտքով՝ կարևոր հաւաքում մը տեղի ունեցաւ։ Ներկայ կը գտնուէին անգլիական խորհրդարանի բազմաթիւ անդամներ։ Պ. Հէրբէրտ Գլադստոնի կողմէ ներկայացուած օրակարգը միաձայնութեամբ ընդունուեցաւ։ Այս օրակարգը կը յայտարարէ.

„Ժողովը նկատելով, որ Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ թիւրք վարչութեան անկանոնութիւնները քաղաքակրթուած Եւրոպայի համար ամօթ մին է, կը հաստատէ, որ Անգլիոյ և միւս պետութեանց պարտականութիւնն է այս երկիրներու մէջ խաղաղութեան վերականգնումը“։

*

„Կոմկասեան կառավարչապետի օգնական գեներալ Մալամա—գրում են մեզ Թիֆլիսից—փորձում է խաղաղացնել ազգաբնակութեան յուզած մտքերը։ Նորերս նա դիմեց Մկրտիչ կաթողիկոսին, երբ վերջինը Թիֆլիս էր, և խնդրեց՝ „դործ դնել իր ամբողջ ազդեցութիւնը հայերին խաղաղացնելու համար“։ Հայոց կաթողիկոսը յայտնեց, որ „հակառակ իր անկեղծ ցանկութեանն, անկարող է ներդործել իր հօտի

դրդուած տրամադրութեան վրայ"։ Գեներալ Մալամա նոյնպիսի դիմում արել է և այլ անձանց"։

*

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ ֆրանսիական կառավարութեան միջոցով Սասունի և Մուշի կարօտեալների օգտին ուղարկած 35 հազար ֆրանկի մի մասը, մօտ 20 հազար, արդէն բաժանուած է կարօտեալներին։ Յետագայ գումարներով մոռդրութիւն կայ գարնան սկիզբներին սերմացու բաժանել կարօտ գիւղացիներին։

*

Մակեդոնական կոմիտէն հիմնեց Պարիզում մի նոր օրգան՝ „La Macédoine", որի նպատակը պիտի լինի պաշտպանել և պարզաբանել Մակեդոնիայի քաղաքական շահերը։ Երկշաբաթաթերթ է. խմբագիրն է Բալկանի խնդրին լաւ ծանօթ Ժորժ Գոլիս։

*

Կ. Պոլսէն կը հեռագրեն.

„Եմէնի մէջ խառնակութիւնները կը տարածուին։ Զօրքերու հրամանատար վալին անմիջական նոր օգնութիւն ուզեց։ Թիւրք կառավարութիւնը բէտիֆները ղէնքի տակ կանչեց և Պաղեստինէ և Սիւրիայէ 30 հազար մարդիկ ուղարկուեցան։ Այս միջոցը գիւղացիներու մէջ մեծ յուզում պատճառեց, զինուորութեան յարմար բոլոր երիտասարդներ դրօշակի տակ կանչուած ըլլալով։ Երուսաղէմի արաբները կը հաւատան, որ անգլիացիներ Եմէնի արաբներին կ՚օգնեն թիւրքերու դէմ՝ անոնց թնդանօթ և դրամ հայթայթելով"։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՏԵՌՕՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակում ենք 1904 թւի ընթացքում Կովկասի մէջ Դաշնակցութեան ձեռքով կատարուած գլխաւոր տէրօրների ցանկը, որից մի քանիսը մեայն յիշատակուած են „Դրօշակ"-ում։

Գ ա ն ձ ա կ. — Սպանուած են՝ փոխ-նահանգապետ Անդրէեվ, ոստիկան Սերգէյ և երկու լրտեսներ։

Ի գ դ ի ր.—Սպանուած է՝ Գաւառապետ Բօգուսլավսկի։

Ղ ա ր ս. — Սպանուած է ժանդարմական թարգման Գրիգորով։

Ս ա ր ը ղ ա մ ի շ.—Սպանուած են՝ Ալաշկերտի յայտնի քիւրդ Ալի բէյ և իր մտերիմը, որոնք անցեալ տարի փնտռել էին Դաշնակցութեան արշաւախմբերին։

Շ ո ւ շ ի. — Սպանուած են՝ ոստիկանապետ Սախարով, հարկային վերատեսուչ Շչերբակով, մէկ ժանտարմ, մի լէզգի ոստիկան և մի հայ մատնիչ, Արշակ անունով։ Վիրաւորուած՝ ոստիկան Հայրապետ և լրտես Խորայէլ։

Շ ո ւ շ ի գ ա ւ ա ռ ո ւ մ՝ սպանուած են 6 յայտնի վաշխառուներ։

Ա լ է ք ս ա ն դ ր օ պ օ լ. — Գաւառում սպանուած է մի յոյն քահանայ, որ յունադաւանութեան պրօպագանդ էր անում՝ հայ ժողովրդի մէջ։ Քաղաքում՝ վիրաւորուած է պրիստաւ Նաշչինսկի, սպանուած է մէկ ոստիկան։

Ա խ ա լ ք ա լ ա ք. — Վիրաւորուած է պրիստաւ Ջաբախով։

Թ ի ֆ լ ի ս. — Սպանուած են՝ թաղական վերահսկող Տէր-Սահակով և երկու լրտես, մէկը ռուս, միւսը թիւրք։

Բ ա թ ո ւ մ. — Սպանուած է յայտնի յեղափոխական-շանտաժիստ՝ կեղծ վարդապետ Տրիֆոն։

ՆԻՒԹԱՏԻՊԱՐԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Ռուսաստան. — „Դրամ" կօմ.-էն 20,600 ֆրանք։

Բուլգարիա. — Սիլիստրէի առժամ. կօմիտէէն 270 ֆրանք։ Նուիրատուներն են՝ Հայրենասէր 20. 80 լէվ, Կ. Ս. Թ. 10. 40, Գ. Տ. 10, Ե. Փ. 10, Թ. Մ. 1, Ա. Ք. 5, Ս. Մ. 3, Օ. Ա. Թ. 2, Ե. Հ. Մ. 10. 40, Նղ. Ա. 1, Ա. Փ. 10, Ոմն 1, Զ. Մ. Թ. 5, Ս. Ծ. Պ. 3. 50, Ոմն 1. 50, Ե. Ը. 2, Ա. Ե. 1, Ե. Հ. 3, Ա. Օ. Մ. 1, Ե. Ե. 2, Ղ. Զ. 10. 40, Հ. Ե. Ճ. 4, Մ. Ա. 3, Ե. Բ. 1, Ա. Թ. 5. 20, Մ. Օ. 3, Պէյ 2, Ի. Ա. 2, Փ. Բ. 1, Կ. Հ. Պ. 5. 20, Ս. Մ. 5, Ս. Զ. 5. 20, Հ. Կ. Հ. 2, Հ. Ե. Բ. 2, Պ. Կ. Պ. 2, Օ. Ս. Փ. 5, Կ. Ա. 2, Գ. Ս. 3, Ե. Ն. 1, Կ. Գ. 3, Ը. Տ. 0. 50, Կ. Ա. 2, Գ. Ս. 1, Վ. Մ. 1, Ս. Ա. 3, Մ. Մ. 2, Խ. Ա. 5, Թ. Մ. 5, Մ. Խ. 2, Ե. Զ. 1, Մ. Մ. 2, Հ. Պ. 1, Պ. Գ. 5, Ս. Լ. 2, Խ. Ա. 5, Կ. Ա. 5, Գ. Ս. 1, Ե. Ս. եւ Տ. Ե. 5, Ե. Մ. 1, Մ. Տ. 5, Քուղուպաշ 0. 50, Մ. Ե. 1, Ա. Փ. 1, Ճ. Ղ. 2, Ա. Շ. 1, Ս. Ե. 2, Խ. Ա. 2, Խ. Տ. 1, Պ. Ղ. 1. 20, Ս. Ե. 2, Մ. Խ. 1. 50, Հ. Հ. Թ. 2, Պ. Խ. 2, Քաջ Յովհաննէս 1, Ա. Ե. 2. 50, Մ. Ղ. 2, Ե. Ծ. 2, Ե. Ն. 1, Սլաք 5, Ս. Տ. 5. 20, Ո. Մ. 5, Խ. Ո. 4, Ոմն 7 լէվ։ Վառնայէն Ս. Թորոսեան 5 ֆր.։

Ռումանիա. Փոքշանի նորակազմ Աստղիկ խմբէն 78 ֆրանք։ Նուիրատուներն են՝ Զոհ, Սմբատ, Նիկողոս 10-ական, Երկաթ, ճամբորդ մը, Սուր, Գողիաթ, Գոռայր 5-ական, Հայդուկ 4, Սարգիս Յարութիւն 4, Կայծակ 3, Անտօն, Վահրամ, Զամբիկ, Պողոս 2-ական, Դաշոյն, Առիւծ, Թափառական, Թորգոմ 1-ական ֆր., Կոնստանցա՝ Մ. Գուզուճեանէն Բագւի Կ. Կօմ-ի վիճակահանութենէ շահած 25 ռուբլի պարգեւէն նէր 16 ֆրանք։

Ընդհանուր գումար 20.964 ֆրանք։

ԺԼԱՑԻ կօմիտէն՝

1904 թ. հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31.

Ժլատի խմբերից՝ Արարատ 19 ռուբլի, Թորգոմ 28, Պետօ 14. 25, Ովսաննա 66, Քեռի 16. 70, Արարատ 17, Նոյն խմբի հանգ. եւ 24 ձեռք սպիտակեղէն 9. 77, Մուրհակ 50, Յոյս 7. 75, Արարատի կնունքից 10. 95, Նոյն խմբի ամսվճ. 20. 25, Քեռի 15. 10, Ռիտվիզանից 40, Զաւէնի ձեռամբ տօնավաճառ. հանգ. № 66 թերթով 282, տիկ. Ե.-ի եւ օր. Ն.-ի ու այլոց օժանդ. վիճակախաղից 388. 40, Ռատից՝ Կրակոտ խմբ. 8. 50, Հուր եւ Զէնք 31. 50, Հայկազունք խմբ. 16. 83, Բուժարանի խմբերից 100, Մժեղեան կնքած թերթ. հանգ. 10. 60, վիճակախաղից դանակի ապառիկ 2, Առատից ամս. 37. 34, Կրէտացի 31, Կարօ խմբ. 100, Թորգոմ 10, Արծիւ քաղաքի ապառիկից 40, ՆորԱւանի կօմիտէից իր ստացագրերով՝ Կ. Խ. 250, Յար. 50, եղբ. Ս-ներից 500, Զգ-ներից 200, եղբ. Բ. 200, եղբ. Զմ. 150, Ծիրանից 500, Պ. Զղ. 100, Պ. Գ. 100, եղբ. Վերդ-ներ 250, Պ. Գ. Ա. 100, Մ. Գ. 100, Ե. Թոր. 1,000, Գ. Բար. 500, Խ. Ամիր. 50, Մելքոն Այվ. 150, Պ. Թորոս. 500, Ե. Թոր. 500, Միք. Թոր. 3,000, Ա. Թոր. 3,000, Աք. Գաս. 200, Բար. Գաս. 200, եղբ. Բալ. 200, Ե. Այվ. 150, Ս. Բար. 500, Անայտ-Շահ 500, Թեւ. Սար. 100, Մակ.-Աք. 100, խմբերից՝ Ծաղիկ 35. 33, Անդրանիկ 18. 50, Կոռնկ 13, Գուղական 9, Յոյս 6, եւս 14 ռուբլի։ Գումար 14,527 ռուբլի 32 կոպէկ։

ԱԼԷՔՍԱՆԴՐԻՈՅ կօմիտէն՝

1904 օգոստոսէն մինչեւ 1905 յունուար 31.

Հետեւեալ խմբերէ՝ Տալլորիկ 96 դուրուշ ողջ, Սասուն 59, Բաֆֆի 125, Ձեռք 160, Խոզան-Տաղի 70, Բիէր Արուսեան 80, Տիգրան Եաղուպեան 25, Ձեռք խմբի մինչոցով հանգանակ. 94, Նոյն խմբի մինչոցով եղբարք Պոստանեանէն 10, Հայ Ուսանողական Միութեան նուիրած պրոշիւրներու վաճառումէն 26 դրշ. ողջ։ Գումար 745 դրշ. ողջ։

Յունաստանի Կիլիկիայ խմբէն 1904 տարեշրջանի ամսավճարներ 101 տրախմի, նէր Մահտեսի Մելքոնէն 15, Գ. Մ. Կիրակոսեանէն 8, Անցորդներէ 0. 80։ Գումար 124. 80 տրախմի։

ՈՍԿԵՀԱՆՔԻ կօմիտէն՝

1904 հոկտեմբերէն մինչեւ դեկտեմբեր.

Անձնուրաց խմբ 28. 5 դրշ. ողջ, Ախոյեան խմբ 2 անգամէն 38, Դիտակ 3 անգամէն 14. 75, Մշակ 10, Վազգէնի խմբ. 45. 5, Գուրգէնի քով մնացած նէրներէ 19, Սուրէնի մինչոցաւ հավակիր մը 312, Եզնիկ 2 անգամէն 38, Կայծակ 8, Ա. Կ. Ընկերք 25, Գեղեցիկ 10, Լեռնահովիտէն ոմն 51. 5, Աշոտ 103, Անձնուրաց խմբ. 28. 5, Մխիթար 67, Ախոյեան 19, Եզնիկ 19, Գեղեցիկ 10, ճակատ 18, Վռամ 8, Պալասաս 38, Կայծակ 8, Ա. Կ. Ընկերք 12, Յուլիս-սեպտ.-ի մէջ ստացուածներէ մնացորդ՝ Պալասաս 36, Վահրիճ 10, Արքի 19, Սամուէլ 2 անգամէն 10, ինչպատ քանտարկելոց՝ Անձնուրաց խ. 2 անգամ. 29, Ախոյեան խմբ. 2 անգամէն 28, Պալասաս 9. 75, Վռամ 4, ճակատ 10։ Գումար 1086 դրշ. ողջ 20 փարա։

Ս. Քաղաքի Կեդրոնական Կոմիտէն՝

(Շարունակ. No 1-ի)

1904 թ. Հոկտեմբերի 4-ից մինչեւ Նոյեմբերի 6-ը.

Նոմէր 17՝ 3. 50 ռուբլի, Ն. 45 խմբ. միջ. 44, Ն. 52 խմբ. մի անդամից տուգ. 3, Հայկ. Կարմիր Խաչ. Ն. 17 խմբ. 3, Ն. 61 խ. 5, Ն. 62՝ 3, Ն. 31՝ 3. 85, Ն. 32՝ 2. 80, Ն. 33՝ 3 60, Ն. 35՝ 3. 70, Ն. 54՝ 8. 50, Ն. 63՝ 3, Ն. 17՝ 6. 75, Ն. 13՝ 3. 70, Ն. 19՝ 4, Ն. 11՝ 5. 50, Ն. 16՝ 4. 70, Ն. 12՝ 7, Ն. 12 2՝ 6, Ն. 11՝ 9. 60, Ն. 41՝ 4. 80, Ն. 15՝ 4. 80, Ն. 41՝ 4, Ն. 14՝ 2. 10, Ն. 42՝ 4, Կայծ խմբ. 7. 50, Ն. 16՝ 2. 43, Ն. 62՝ 2. 50, Ն. 36՝ 4. 15, Սարգսի տասնեակից .50, Ն. 44՝ 1. 50, Ն. 45՝ 2. 15, Ն. 46՝ 3. 10, Ն. 1՝ 20, Ն. 3՝ 16. 50, Ն. 5՝ 6. 50, Ն. 12՝ Բարձր Հայք խմբ. 6. 10, Լեռնաստանի շրջ. Ազրայէլ խմբ. 1. 50, Զեռնակ խմբ. 20, Արշալոյս խմբ. 34. 10, Առիւծ խմբ. 6, Պանդուխտ խմբ. 45. 90, Հրայր խմբ. 100 փամփուշտ, Վրէժ խմբ. 160 ռ., Նոմ. 17՝ 1. 90, Ն. 17՝ 1. 30, Ն. 12՝ 22, Շամիրամ խմբ. 10 ռ., Աղբիւր խմբ. 60 փամփուշտ, Արտաշէս 1 հրացան, Նոմ. 174 Նուիրատուութեան թերթ 14. 50, Նոմ. 5 խմբ. 2, Մենակ խմբ. Գուլար շրջ. 4, Ղեւոնդ խմբ. 3, Նոյն շրջանից 12, Բարձր Հայք խ. 1, Կարմիր Խաչ. Ն. 17 խմբ. 1. 45, Ն. 17 խմբ. 6. 85, Ն. 13 խմբ. 3. 90, Ն. 14՝ 2. 50, 1-ին հարիւր 3-տասն 2. 50, 1-ին հարիւր Պետրոսի տաս. 1. 95, Շուշանիկ խմբ. 2. 95, 1-ին հարիւր 8 տասն 2, 1-ին հարիւր 9 տասն 2, II հարիւր 1 տասն 3. 25, Նոմ. 61՝ 5, Ն. 54՝ 4. 40, Ն. 52՝ 3. 50, Հարձ Հայք խմբ. 3, Բարձր Հայք խմբ. 5. 50, Ն. 64՝ 7, Ն. 18՝ 2. 61, Ն. 11՝ 5. 22, Ն. 20՝ 4. 75, Ն. 15՝ 4, Ն. 7՝ 13. 50, Ն. 34՝ 3, Ազրայէլ խմբ. Լեռնաս. շրջ. 1. 50, Պարոյր խմբ. 2. 35, Զոնիկ 1. 95, Նոմ. 3՝ 6. 50, Ն. 2՝ 4. 30, Ն. 2՝ 5. 60, 1-ին հարիւր 1 տասն 9. 10, Ն. 14 խմբ. 3. 1, Ն. 12 խմբ. 5. 70, Ն. 13՝ 5. 3, Ն. 62՝ 3. 50, Ն. 63՝ 3, Ն. 68՝ 3. 20, Ն. 58՝ 3, Ակնակ խմբ. Մեծ քաղ. շրջ. 103. 28, Ն. 17 խմբ. 1. 50, Ն. 13 խմբ. 0. 30, Փիրզատուշ խմբ. 20, Ն. 15 խմբ. 5. 50, Ն. 12 խմբ. 5. 70, Ն. 17 խմբ. 3. 42, Կարմիր Խաչ Ն. 17 խմբ. 2. 25, 1-ին հարիւր 1-ին տասն 8. 90, 1-ին հարիւր 10 եւ 11 խմբ. 50, 2-ր հար. 6-ր տասն 7, Թելալից 7, Նոմ. 17 խմբ. 2. 47, Գէորգից 1 ռուբլի: Գումար 370 ռուբլի 87 կոպէկ:

Եկեղեցիի Կոմիտէն՝

Նալբանդի շրջան.—Նոմէր 35 Նետ խմբ. 27. 80 ռուբլի, Ն. 36 Արծուիկ խ. 8, Ն. 37 Լուսատու խ. 8, Ն. 38 Թնդանօթ խ. 14, Ն. 39 Մեղու խ. 5. 60, Ն. 40 Մովսէս ատամնամ. Ներկ. եւ ժանգ 58. 72, Ն. 41 Անշինչ 15, Ն. 42 Անշինչ 15, Ն. 43 Լուսատու 9, Ն. 44 Բարիսոմիէ 6. 80, Ն. 45 Գալի բուն 12. 60, Ն. 46 26-ից 30, Ն. 47 Պօղոս գիւղից՝ Ս. Կ. 25, Ն. 48. Լ. Մ. 10, Ն. 49 Ց. Բ. 5, Ն. 50 Ց. Թ. 11, Ն. 51 Ատղիկ խ. 42, Ն. 52 Ատղիկ խ. 3. 40, Ն. 53 Լուսատու 11, Ն. 54 Ծ. Գ. Խ. 4, Ն. 55 Անշինչ Խէթ խ. 10, Ն. 56 Շշինիկ խ. 5, Ն. 57 Ալադիոզ խ. 100, Ն. 58 Նետ խ. 10, Ն. 59 Ատղիկ խ. 7, Ն. 60 Արծուիկ խ. 12, Ն. 61 Ծ. Գ-խ 2, Ն. 62 Ղ. Գ.-ի մինչոցով 17 անհատներից 16, Ն. 63 հինգ երգիչներից 2. 60, Ն. 64 Մեղու խմբ. 3. 80, Ն. 65 Մովսէս 13, Ն. 66 Լուսատու 11, Ն. 67 Մեղու խմբ. 5. 40 ռուբլի: Գումար 519 ռուբլի 72 կոպէկ:

Նախիջեւանցիի Կեդր. Կոմիտէն՝

Գաղթավայրից՝ Քարաժայռ գիւղի Բարկէն խմբ. 74. 70 ռուբլի, Նորաշէն գիւղի Դժոխք խմբ. 89. 50, Արծաթ-ջուր գիւղի Սերոբ խմբ. 56. 10 ռուբլի: Գումար 220 ռուբլի 30 կոպէկ:

Տեղական Կոմիտէն՝ Հոկտեմբեր ամսուն.—Հետեւեալ խմբերից՝ Եփրատ 9. 50 ռուբլի, Արաքս 12, Արարատ 29. 50, Պահանջ 5, Արծրունի 117, Աղբիւրաւոր 27, Մուշեղ 40, Ծովասար 40. 40, եւս նէր 1, Բայազ-աղբիւր 11, Բիւրական 41, Կաթիլ 139. 50, Վառուած Տարօնացի 30, Ռշտունեանց 8, Ցընգատար 62. 40, Ղարադուման 50. 50, Բագրատունեան Տապան խմբ. 8, Խիկար 37, Թափառական խ. 5, Նոր կեանք 44. 80, Սայատից տուգանք 10, Ցար. Ազիզեանից 3, Արշաւիրի Զարէնից տուգ. 3 ռուբլի:

Նոյեմբեր ամսուն. Հետեւեալ խմբերից՝ Արշաւիրի 5-րդ տասնեակից 11 ռուբլի, Շանթ 34, Ճառագայթ 26, Վարազդատ 128. 80, Առիւծ 67. 50, Մուշեղ 40, Աղբիւր 6, Արմատ III 64. 60, Զինարէթ 22, Արաքս 12, Քէօսա-տաղ 21, Թափառական 6, Տարօնացի 50, Մանկունի 42 Կարէզ 76, Եփրատ 9, Գազան Տարօնացի 23, Բագրատունեան Տապան 7, Շանթի Մինր 3, Բագրատունի 48. 50, Արարատ 9. 50, Բիւրական 40. 70, Լոյս 13, Արտաւազդ 29. 60, Կարին 25. 50, Մայր Արաքսի 26. 60, Սիփան 89, Զարեւանդ 200, Ծովասար 8, Արշաւիր 350. 20, Արծիւ I եւ II ճիւղ 92, Սեւան 14, Դերձակ 131, Քաջալեր 60, Պողպատ 66. 40, Մտրակ 15, եւս 5, Բ. Կայծակ 49. 60, Սուրէնեան 77, Արագած 30, Հայկազեան 13. 40, եւս 6, Քաջբերունի 53, եւս 19, Արմատ III ճիւղ 44. 80, Օղակ 15, Մանզաւէր 80, Վրէժուհի 45, Իշխանեան 28, եւս 3, Արեւեան 26. 50, Մասիի վիճակախաղից 120 ռուբլի: Անհատներից՝ Արեւելք 20, Ցար. Ազիզեան 3, Անի Սոճ. ճ. 19, Պողպատի Վրէժից 5, Կոստանից տուգանք Կ. Կ. առաջարկ. 30, Վարդան Նալբանդեան 2, Մահտեսի Մխիթար 1, Դերիկ խմբի անդամ Խոսրովից 4 ռուբլի:

Գաղթավայրի Կոմիտէն՝ Արտամետ գիւղից Նէրէներ՝ Հայկ, Արմենակ, Արամայիս, Հարմա, Վահագ 3-ական ռուբլի, Նրա 2. 50, Ամասիա, Գեղամ 1. 50-ական, Վանդակի Ս. Յակոբ խմբ. 17, Գաղթավայրից՝ Սկզբունք խմբ. 150, Կայծակ խմբ. 54. 50, Եզիպտացի խմբ. 140. 70, Հրայր խմբ. 98, Եփրատ գիւղի Անուշաւան խմբ. 31. 20 ռուբլի:

Ընդհանուր գումար 4034 ռուբլի:

Ոսկանապատի Քաղաքային Կոմիտէն՝

1904 թուականի Նոյեմբերի ընթացքում.—

Լուսիկից 100 ռուբլի, Ա. Գ. Ար-եան 50, Ա. Պ. Ս-եան 25, Ջ. Ս-եան 10, Եղ. Ա-Բ-եան 10, Մի ոմն 2. 60, Սուլթանի ճաշի մինչոցով Ն 46 թերթ. հանգանակուած 36. 50, Արեան-փողոցում Ն 47 թերթ. հանգանակուած 216, Բաք-եան 25, Սեկրետից 10, Գալ-եանից 10, Կարմիր-ժայռից 100, Ն. Տ-Մից 5 ռուբլի:

Խմբերից՝ Քանքար 22. 50, Խրզան 9, Մաճ I 15, Ըմբոստ 6, Դալորիկ 29, Աղբիւր 5. 60, Ջրանցք 5. 50, Ջրհոր 6. 60, Արեանծորի երեկոյթից 92. 72, Հայրենասէր Ն 7, Առիւծ 11, Սարսափ I երեկոյթից 118, Խրզան 9. 50, Հայրենասէր I, II, III, IV խմբ. 6-ական. Սերոբ 11. 50, Լոյս 7, Արեանծոր 10, Սիւնիք 8, Աքցան 8. 10, Արշալոյս 15. 27, Հրդեհ 5. 30, Աշոտ-երկաթ 19. 50, Եռվկաս 5, Ասլան 3. 50, Աշուղ 7, Յոյս 8, Պոնտոս 14, Ցանց փողոցից՝ Նասիք 8. 50, Շահ 9, Աղայ 11. 50. Ս. Ժ-ից 1. 50, Պ. Գ. Ղ-ից 2 ռուբլի:

Թառաստանի ենթակոմիտէից յուլիս 29-ից մինչեւ հոկտեմբեր.—Հետեւեալ խմբերից՝ Արմատ 21. 50 ռուբլի, Հայկազունք 17, Նետաձիգ 18. 80, Արեւաբոյս 5. 50, Փունջ 76. 95, Թուման 4. 60, Անդրանիկ 73, Հրայր 68, Փունջ 26. 52, Հայկազունք 10. 70, Արմատ 2. 60, Նետաձիգ 10. 5, Ազգասէր 10, խնջոյքից եւ զրքերի վաճառումից 6. 26: Հոկտեմբերի ընթացքում՝ Գէորգից եւ իր ընկերոջից 45 ռ., յունիս 8-ի ներկայացումից 75, խմբերից՝ Հայկազունի 7, եւս 5. 30, Փունջ 23. 75, եւս 12, Նետաձիգ 7. 5 ռուբլի:

Կարմիր Չրի ենթակոմիտից յունիս 1-ից մինչեւ 1 Նոյեմբերի.—Եկամուտ 24 ռուբլի, Ալազ քաղաքի Սոս խմբ. 49, Նոյն խմբից 25, Թասոյից 10, մի խնջոյքում հանգանակուած 18. 50, մի խնջոյքում հանգանակ. 21. 90, մի խնջոյքում ծովի ճաշի մինչոցով հանգանակ. 5. 53, հին կայծակ խմբի վիճակախաղից եւ զրքերից 27. 80, մի մարտուիթից բալբուլաղցու մինչոցով 10. 50, Փարաւշից 1, խմբերից՝ Արուսեակ 29. 5, Արմատ 21. 80, Կոկոն 15. 50, Հոյս 37. 58, Կայծակ 23, Հրայր 18. 50, Անդրանիկ 54. 50, Կիրճ 18. 85, Պետրոս Սերեմեան I 7, Պետրոս 7, Վրէժ 5, Պետրոս-Սերեմեան II 7. 50 ռուբլի:

Գումար 2086 ռուբլի 27 կոպէկ:

Ագարակ Կոմիտէն՝

1904 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 5-ը.—

Բլրաշէն գիւղի Անդրանիկ եւ Հրայր խմբերից 100 ռուբլի, Պ. Դուտնա 2,000, Սեմ. երեկոյթից 47. 40, Ամառ. Համերգից 97, Հրայր խ. 11, Անդրանիկ խմբ. 27, Մարգան խմբ. 25, Մազնիս եւ Սէր խմբ. 60, Գործակատար խմբի Թումանի յիշատակին տուած երեկոյթից 270, Նպատակ խմբ. 100, Վնար 10, սեպտ. եւ հոկտ.-ի ընդհանուր տուրք 409. 10: Գումար 3156 ռ. 50 կոպ.:

Ատրպատականի Կեդր. Կոմիտէն՝

Մինարէթ մինչեւ 1904 թ. դեկտեմբերի 1-ը.

Հետեւեալ խմբերից՝ Հարաւուլ 21. 85 ղրան, Անդրանիկ 86. 90, Դերիկ 96, Գոլոշեան 37. 50, Բարդուղիմէոս 68. 60, Տարածող 115, Աղբակ 264, Նոյն խմբի ներկայացումից 200, Զարեւանդ 118, Նոյն խմբի ներկայացումից 200, Դարբին 56, Արշալոյս 42, Զօլա 322, Կարօ 312, Նէր Դերեկի մինչոցով 30 ղրան: Գումար 1969 ղրան 85 կոպէկ:

ՎՐԻՊԱԿ.— «Դրօշակ»ի նախորդ No 1 համարում ԴԱՆՈՒԲ կոմիտէի նուիրատուութեանց ցանկին մէջ սխալմամբ չէ արձանագրուած հետեւեալները՝ Ս. քաղաքի «Արարատ» ընթերցարանի հասոյթ 352. 25 ֆր., նոյն քաղաքի կանանց «Կարմիր Խաչի» գանձանակէն 202. 30 ֆրանք:

„ԴՐՕՇԱԿ"Ի ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐԸ
ՆԻՒՐՈՒԱԾ ՌՈՒՍԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ԳԼԽԱՒՈՐԱՊԷՍ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rédaction du „DROSCHAK", Genève (Suisse)

ՀՐՕՇԱԿ

1905 № 2 ՓԵՏՐՎԱՐ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԳԱՊՕՆԻ ՆԱՄԱԿԸ

Պետերբուրգի վերջին շարժման յայտնի ղեկավար Գէորգի Գապօնը՝ նախկին քահանայ, ուղարկել է մեզ հետեւեալ նամակը, „Դրօշակի“ մէջ հրատարակելու համար, որը եւ շտապում ենք կատարել մեծ սիրով, խորապէս հաւատալով նրա բովանդակութեան եւ հասակիր նրա կոչին:

Յունուարեան արիւնահեղ օրերը Պետերբուրգում և մնացած Ռուսաստանում՝ դէմ առ դէմ կանգնեցրին ճնշած բանւորական դասակարգը և միահեծան ընժիմը՝ որի գլուխն է արիւնարբու ցարը: Ռուսական մեծ յեղափոխութիւնը սկսեց: Բոլոր նրանք, որոնց համար խնդրոյ առարկայ է ժողովրդական ազատութիւնը, պիտի յաղթեն կամ պիտի մեռնեն: Գիտակից՝ պատմական արդի մոմենտի կարեւորութեան, լինելով, իրերի այժմեան դրութեան մէջ, ամէնից առաջ՝ յեղափոխական և գործի մարդ, ես հրաւէր եմ կարդում Ռուսաստանի սոցիալիստական բոլոր կուսակցութիւններին՝ անմիջապէս յարաբերութեան մէջ մտնել միմեանց հետ և ծնունդ տալ զինուած ապստամբութեան գործին՝ ընդդէմ ցարիզմի: Ամէն մի կուսակցութիւն պէտք է ապառազինի իր բոլոր ուժերը: Ռազմական գործնական յատակագիծը բոլորի համար ընդհանուր պէտք է լինի: Ռումբ և դինամիտ, տէոր՝ անհատական և խմբային: Մերձաւոր նպատակը—միապետութեան տապալում և ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւն, որը անմիջապէս ներում կը յայտարարէ քաղաքական և կրօնական ազատութեան բոլոր մարտնչողներին, խնդրոյ և եթ կը զինէ ժողովուրդը և կը գումարէ հիմնադրական ժողով՝ ընդհանուր, հաւասար, գաղտնի և ընտրողական ծայնատուութեամբ:

Դէպի՞ զոյթ, ընկերներ: Յառա՞ջ, դէպի կռիւ: Կրկնենք Պետերբուրգի բանւորների յունուար 9-ի հնչեցուցածը—ազատութիւն կամ մահ: Ներկայ բոլշեւիկներին՝ ամէն մի ձգձգում և շփոթանք՝ ոչիր է. այն ժողովրդի հանդէպ, որի շահերն էք պաշտպանում դուք: Նվիրելով իմ բոլոր ուժերը այն ժողովրդի գործին, որի ծոցից ես ինքս դուրս եմ եկել (գիւղացու որդի), անդարձօրէն կապելով իմ վիճակը այն պայքարի հետ, որ մղում է բանւոր դասակարգը ճնշողների և հարստահարողների դէմ, ես բնականաբար իմ ամբողջ սրտով և հոգով կը լինեմ նրանց շարքերում, որոնք կը զբաղուին պրօլետարիատը և աշխատաւորը ամբողջ մասսան կապիտալիստական ճնշումից և քաղաքական ստրկութիւնից ազատելու իրական գործով:

ԳԷՈՐԳԻ ԳԱՊՕՆ

17 փետր. 1905

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կրակով, 4 փետրուարի

Արիւնահեղ կռիւներ ռուսական Լեհաստանում: Լեհական շարժումը միանգամայն տարբեր է Պետերբուրգի ու Մոսկուայի անցքերից.—նա կազմակերպուած է Լեհ Սօց. Կուսակցութեան ձեռքով և կրում է զուտ քաղաքական բնաւորութիւն: Բացի այդ՝ լեհերը ցոյց են տալիս յաճախ զինուած դիմադրութիւն: Շարժման անմիջական նպատակն է՝ ձեռք բերել լեհական պարլամենտ՝ ընտրուած ընդհանուր, հաւասար ձայնատուութեամբ: Ընդհանուր, համատարած գործադուլ է. հասարակական բոլոր հիմնարկութիւնները փակուել են: Հաղորդակցութիւնը դադարել է: Բանւորները աւերումներ են գործում: Համալսարանում ևս ընդհանուր „գործադուլ“ է,—ուսանողները միաբերան պահանջում են լեհական լեզուի ներմուծումը: Ցոյցերն ու ընդհարումները յաջորդում են իրար Վարշաւա, Բագօմ, Լօձ և ուրիշ կենտրոններում. հարիւր հազարաւոր պրոլետարիատը ոտքի է կանգնել. սպանուածների և վիրաւորների թիւը արդէն հաշւում են հարիւրներով:

5 փետրուարի

Դոմբրովայում 15 հազար բանւորներ ցոյց կազմակերպեցին: Դրօշակները պարզած՝ նրանք ուղղուեցին դէպի Սոսնովից և այնտեղից փորձեցին դիմել դէպի Վարշաւայի կայարանը, բայց կօզակները արգելեցին: Սոսնովից-Օլկուշ երկաթուղային գծի վրայ ապրանքների տեղափոխութիւնը դադարած է:

5 փետրուարի

Ամբողջ ռուսական Լեհաստանում գործադուլ անող բանւորների թիւն է մօտ 400 հազար:

Հելսինքֆորս, 6 փետրուարի

Այսօր սպայի զգեստ հագած մի մարդ սպանութեան փորձ արեց Ֆինլանդական Սենատի պրօկուրօր՝ Ջոնսօնի վրայ, վերջինիս բնակարանում: Պրօկուրօրը անմիջապէս մեռաւ: Նրա որդին ևս վիրաւորուեց:

Պետերբուրգ, 6 փետրուարի

Պետերբուրգի ազնուականութիւնը իր համագումարում որոշեց 158 ձայնով ընդդէմ 20-ի, մի ուղերձ ղրկել թագաւորին, որի մէջ ասուած է իմիջի այլոց. „Տէր, հրամայեցէք, որ ժողովրդից ընտրուած ներկայացուցիչները ազատօրէն հասցնեն իրենց ձայնը արքայական գահին և մասնակցեն օրէնսդրութեան կառավարչական միջոցների քննութեան մէջ:

7 փետրուարի

Պարիզի լրագիրներին հաղորդում են շատ արժանահաւատ աղբիւրից բղխող մի լուր, իբր թէ Մինիստրների կոմիտէն, ցարի Նախագահութեան տակ կազմուած իր մի խորհրդի մէջ որոշել է շուտով գումարել ազգային ժողով. այդ վերջինը պիտի բաղկանայ զէմստվոների պատգամաւորներից և պիտի ունենայ պարլամենտի գրեթէ բոլոր յատկանիշները:

8 փետրուարի

Բելգիական լրագիրներին հաղորդում են Պետերբուրգից, որ յունուարի 26-ին ոստիկանութիւնը թաղել է տեղական գերեզմանատանը սպանուածների դիակները, որոնք փոխադրուել էին 26 վագոններով:

Պետերբուրգ, 8 փետրուարի

Զինուորական բժշկական Ակադէմիայի ուսանողները, միաբանելով միւս բարձրագոյն դպրոցների պրոֆէսորների և ուսանողների հետ, միաձայն որոշեցին, որ անհնարին է շարունակել ուսումը, քանի դեռ ոստիկանութիւնը պահպանում է իր բացառիկ լիազօրութիւնները: Ուսանողները պահանջում են փակել Ակադէմիան, մինչև չվերանան խոչընդոտները:

Թիֆլիս, 9 փետրուարի

Բաթում.—դրութիւնը մնում է անորոշ: Երկաթուղու բանուորները գործադուլ արին: Իշխան Գուրիէլի, ոստիկանութեան բարձր պաշտօնեայ, սպանուեց օր ցերեկով:

Թիֆլիս.—երկաթուղու բանուորների, զանազան գործարանների ու տպարանների գործադուլը, որ յայտարարուած է Ցունուարի 31-ին, շարունակւում է տակաւին:

Երևան.—Սպանութեան փորձ եղաւ գաւառապետի օգնականի վրայ:

Դորպատ, 9 փետրուարի

Համալսարանի 17 պրոֆէսորներ, ժողով գումարելով, որոշեցին թողնել իրենց պաշտօնավարութիւնը, քանի որ ուսանողները գտնւում են ծայրայեղ գրգռման վիճակում: Ակադէմիական ժողովը վճռեց, 28 ձայնով ընդդէմ 7-ի, դադարեցնել դասախօսութիւնները:

Վարշաւա, 9 փետրուարի

„Փետրուարի 1-ին ռուսական Լեհաստանի բոլոր քաղաքներում բարձրագոյն և միջնակարգ դպրոցների աշակերտները վճռեցին չյաճախել դպրոցները, մինչև որ չընդունուեն իրենց պահանջները, որ հետևեալներն են.

1) Դպրոցը պէտք է լինի ազգային-լեհական: 2) Ուսուցիչներ կարող են լինել միայն ռուսական Լեհաստանի քաղաքացիներ: 3) Ընդունել ազատօրէն դպրոցների մէջ բոլորին, առանց խտրութեան կրօնի և ազգութեան: 4) Լեհական լեզուն և պատմութիւնը պէտք է աւանդուեն, իբրև պարտադիր առարկաներ: 5) Ոստիկանական սիստէմը պէտք է վերանայ: 6) Ոչ մի աշակերտ չպէտք է արտաքսի դպրոցից քաղաքական նկատումներով և այլն:

Պետերբուրգ, 9 փետրուարի

Բուլիգինի նշանակումը, իբրև Մինիստրներքին գործերի, ծանր տպաւորութիւն է գործում: Այդ քայլը համարում են մեծ իշխան Սերգէյի յաղթանակ և բռնակալիայի ազդանշան: Նոր Մինիստրը զէմստվոների հակառակորդ է:

Բաթում, 9 փետրուարի

Գործադուլը տարածւում է նոր ուժով: Բոլոր գործարանները, բացի մէկից, դադար են առել, բազմաթիւ մագազիններ և խանութներ փակուած են: Կորուսանելիները մեծ են: Կենսապիտոյքների գները բարձրացել են, երկաթուղու գիծը վնասուած է մի քանի կիլոմետր տարածութեան վրայ:

Պետերբուրգ, 9 փետրուարի

Հաղորդում են, որ կայսրուհին, սաստիկ ազդուած վերջին անցքերից, կը հեռանայ հաւանօրէն երեխաների հետ Դարմշտատ:

Պարիզ, 9 փետրուարի

Վոլկովիսկում տեղի ունեցաւ կռիւ 3,000 պահեստի զինուորների և զօրքի միջև: Կան բազմաթիւ սպանուածներ:

Պետերբուրգ, 9 փետրուարի

Գապոն քահանային զրկեցին բանտերի խոստովանողի պաշտօնից, զրկեցին նաև իրաւունքից՝ վարելու իր հոգևոր պաշտօնը, մինչև որ չպարզաբանի նրա դերը բանուորական շարժման մէջ:

Պետերբուրգ, 9 փետրուարի

Մաքսիմ Գորկի, որ դեռ պահւում է Պետրոպավլովսկի մէջ, առաջնորդուեց փակ կառքով ժանդարմական վարչատուն՝ հարցաքննելու համար: Գորկին չպատասխանեց իրեն տրուած հարցումներին և նորից փակուեց Պետրոպավլովսկում:

Պետերբուրգ, 10 փետրուարի

Լուր կայ, թէ Պուտիլովի գործարանների 20 հազար բանուորներ նորից գործադուլ են հրատարակել և որ լուրջ խառնակութիւններ են եղել նաև Սմիրնովի գործարանում:

Բազմաթիւ ուսանողներ հաւաքուելով գերեզմանատանը, ուր թաղուած են յունուարի 22-ին սպանուած ուսանողներն ու բանուորները, երդուեցին վրէժխնդիր լինել անմեղ զոհերի համար: Այդ երդումից յետոյ ուսանողները ձերբակալուեցին: Տրէպով յայտարարել է „Ֆրանկ. Ցայտունգի“ թղթակցին, որ Սահմանադրութեան պահանջը չէ կարող ընդունուել, քանի որ „ցարը ինքնակալ է հէնց ժողովրդի կամքով“:

10 փետրուարի

Սոսնովիցից հեռագրում են Բերլինի թերթերին, որ այնտեղ արիւնահեղ ընդհարումներ են եղել զօրքի և բանուորների միջև: Հետևանքը — 150 սպանուածներ և վիրաւորուածներ:

10 փետրուարի

Դրութիւնը ծանր է Լօձում: Պարիկոում խռովութիւններ ծագեցին. զօրքը կրակ արեց, մի բանուոր սպանուեց, երկուսը վիրաւորուեցին:

Լօնդոն, 10 փետրուարի

Վարշավայից հաղորդում են, որ Լեհաստանի կառավարչապետ գեներալ Զերտկովը մեռաւ ամսի 9-ին: Լուր կայ, թէ նա թունաւորուած է իր լեհ խոհարարի ձեռքով:

Լօձ, 10 փետրուարի

Խռովութիւնները վերսկսեցին ծանր կերպարանքով: Գործադուլի բանուորները դիմեցին գործարանները՝ իրենց վճարը պահանջելու. գործատէրերը մերժեցին: Զօրքը եկաւ, ընդհարում եղաւ: Շէրլերի գործարանի մօտ 4 հոգի սպանուեցին և 68-ը վիրաւորուեցին:

կոնի գործարանի մոտ 7 հոգի սպանեցին և 40-ը վիրաւորեցին։

Պետերբուրգ, 10 փետրուարի

Մոտ 5,000 բանուորներ, Պուտիլովի գործարանից, ցրուեցին քաղաքի մէջ դադարեցնելու համար աշխատանքը բոլոր հիմնարկութիւնների մէջ։ Զաբալկանսկի պրոսպեկտի վրայ նրանք հանդիպեցին զօրքի շղթային և նահանջեցին։ Բանուորների մի քանի խմբեր փորձեցին ներս խուժել գործարանները, բայց չ'աջողեցին։ Միջոցներ են ձեռք առնուած կարգը ապահովելու։ Գործադուլը վերսկսուեց մի քանի հիմնարկութիւնների մէջ։

Պետերբուրգ, 11 փետրուարի

Ուսանողների խուռն ու երկսեռ բազմութիւն—այլևայլ դպրոցական հիմնարկութիւններից — այսօր Կազանի մայր տաճարում հոգեհանգիստ կատարեց Միխայլովսկու մահուան տարեդարձի առթիւ։ Դուրս գալով, բազմութիւնը թնդացրեց օդը յեղափոխական երգերով, բայց երբ հասաւ Նեվսկի պրոսպեկտին, ոստիկանութեան վաշտերը և ձիաւոր ժանդարմները դիմաւորեց ու ցրեց նրան։

Պետերբուրգ, 11 փետրուարի

Պուտիլովի և ուրիշ գործարանի բանթող բանուորների թիւը հասնում է մոտ 30 հազարի։ Նրանց մեծ մասը փորձեցին կենտրոնական ջրանցքով խմբովին անցնել դէպի քաղաքի կենտրոնը։

Պարիզ, 11 փետրուարի

Պետերբուրգից հեռագրում են, որ Ցարսկոյէ Սէլօ մասում գումարուած մի ժողովում մեծ իշխան Նիկոլայը մերժել է ընդունել Մանջուրիայի զօրքի հրամանատարութիւնը։ Տաք վիճաբանութեան նիւթ են եղել գործադուլները։ Մեծ իշխան Վլադիմիր յայտնել է, որ եթէ ներքին խառնակութիւնները շարունակուեն, պէտք է խաղաղութիւն կնքել, ազատ լինելու համար յեղափոխութեան դիմաց։

Լօձ, 11 փետրուարի

100 հազար բանթող բանուորներ կան Լօձում և շրջակայքում։ Նրանք պահանջում են 8-ժամեայ աշխատանքի օր և ժամը 20 կոպէկ, այսինքն, սովորական ռոճիկից չորս անգամ աւել։ Բանուորների ու գործատէրերի միջև անձնական յարաբերութիւնները վերին աստիճանի բարեկամական են։

Բոլոր գործերը կանգ են առել։ Ամենուրեք փողոցներում զինուորները պտոյտներ են անում։ Պաշարման դրութիւնը շարունակւում է։ Ասում են, որ մի քանի օրից յետոյ կսկսի գործադուլ ամբողջ Լէհաստանի երկաթուղային բանուորների մէջ։

Պարիզ, 12 փետրուարի

Քութայիսում գիմնազիայի և առևտրական դպրոցի աշակերտները դիմադրեցին իշխանութիւններին և հոգևոր դպրոցի աշակերտները թև տուին նրանց։ Իշխանութիւնները ստիպուած եղան փակել դպրոցները։ Բաթումում, գիմնազիայի մի խումբ աշակերտներ հրապարակով պատռեցին թագաւորի պատկերը։ Զօրքեր կանչուեցին և հրացանների մի զալպով ցրուեցին ցուցարարներին։ Մանակի պաշարման դրութիւն է հրատարակուած Քութայիսում։

*

Թիֆլիսի առաջին և երրորդ գիմնազիաները, բէալական և վաճառականական դպրոցները փակուած են։ Իսկ երկրորդ գիմնազիայում միմիայն ստորին դասարանների աշակերտներն են յաճախում դպրոց։ Առաջին գիմնազիայի պատուհանները ջարդուել են. բոլոր այդ հիմնարկութիւնների աշակերտները յատուկ թռուցիկներ են հրատարակել և առաջադրել են իրենց պահանջները։

Պարիզ, 12 փետրուարի

Մոսկուայի գծի վրայ 4 հազար պահեստի զինուորներ ապստամբել են. մի զօրագունդ բերել տուին Նովգորոդից։ Ապստամբները ցրուեցին. աշխատում են անձնատուր անել նրանց սովով։ Մի զինուորական գնացք, որ տանում էր 1,200 պահեստի զինուորներ հարաւարևմուտքից դէպի Կիէվ, տեղ հասնելուց՝ առաջ եկաւ մի ծանր ընդհարում։ Գնացքից դուրս գալով, ռէզերվիստները թոյլ չտուին, որ զինուորական պահակը տանէ իրենց փոքրիկ խմբերով. նրանք ըմբոստացան և յարձակուեցին զօրքերի վրայ։ Բազմաթիւ զինուորներ սպանուեցին։ Երբ պահեստի զինուորները տէր դարձան կայարանին և կողոպտեցին, մի վաշտ օգնութեան հասաւ զօրքին և շրջապատեց խռովարարներին։ Երկու զալպ տուին և սպանեցին վերջիններից մոտ 50 հոգի։ Միւսները անզէն լինելով, տարուեցին երկու ժամեայ կրաւորական դիմադրութիւնից յետոյ։

Լօնդոն, 13 փետրուարի

Պետերբուրգում ստացուած տեղեկութիւնների համեմատ՝ դրութիւնը վերին աստիճանի ծանր է Ռուսաստանի հարաւում։ Իբր թէ հայերն ու վրացիները զինուած արշաւում են քաղաքների վրայ և զօրքերը անզօր են գտնուում բանթող բանուորների դիմաց՝ Բաթումում, Թիֆլիսում և Բագուում։

Պետերբուրգ, 13 փետրուարի

Պաշտօնական „Վէստնիկը" ծանուցանում է, որ 114 մարդ, սպանուած վերջին խռովութիւնների ժամանակ, թաղուեցին Լօձում։ 200 վիրաւորներ գտնուում են հիւանդանոցում։ Զիաքարշները կանգ են առած 16 օրից իվեր։

Լուրջ ձայներ են լսուում, իբր Պետերբուրգի կառավարչապետի պաշտօնը պիտի վերացուի և Գենեռալ Տրէպովի պիտի նշանակուի ոստիկանութեան մինիստր։

Կազան, 14 փետրուարի

Լրագիրներին պատկանող տպարանները այսօր դադարեցրին աշխատանքը։

Ռիգա, 14 փետրուարի

Ռիգայում նորից և աւելի սաստկութեամբ պայթեց գործադուլը։ Մոտ 4,000 բանուոր թողեցին աշխատանքը։

Լէհ Սոց. կուսակցութիւնը ծանուցանում է, որ փետրուարի 7-ին միմիայն Վարշաւայի մէջ հաշուում էին մոտ 300 սպանուածներ, 800 վիրաւորներ և մոտ 2,000 ձերբակալուածներ։ Սպանուածների մէջ կան 10 տարեկան երեխաներ։

Մոսկվա, 14 փետրուարի

Մոսկվայի զէմստվոն բաց արեց նիստը և ընդունեց մի որոշում, որով յայտարարում էր, թէ ներկայ պայմաններում անհնարին է աշխատել։

Պետերբուրգ, 17 փետրուարի

Մեծ իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ սպանուեց Մոսկուայում ռումբի հարուածով. կառքը փշրուեց ռումբի պայթիւնից և մեծ իշխանի մարմինը երեք մասի բաժանուեց։ Երկու տէռորիստները, որոնցից մինը ծանր վիրաւորուած է, ձերբակալուեցին։ Մէկը նրանցից գոչեց.

„Ինչ կուզէ, թող լինի, ես իմ գործը կատարեցի“: Նա յայտարարեց, որ պատկանում է սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան:

*

Սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան մարտական կազմակերպութիւնը (Բոյեվայա Օրգանիզացիա), Մոսկվայի վերջին ցոյցերի բարբարոսական ճնշման առիթով մահուան սպառնալիք էր ուղղել մեծ իշխան Սերգէյին, որ այն ժամանակ Մոսկվայի գեներալ-նահանգապետ էր և պատասխանատու այդ ճնշումների համար: Սպառնալիքը գործադրուեց փայլուն աջողութեամբ: Սարսափը մեծ է Ցարսկոյէ Սէլոյում ու Պետերբուրգում: Մեծ իշխան Սերգէյ, որ Նիկոլայ II-ի օրեղբայրն է, համարւում էր վերջինիս ամենաազդեցիկ խորհրդատուն, մի մարդ, որ ուխտել էր բոլոր միջոցներով արգելք լինել նոյնիսկ ամենախղճուկ ռէֆորմների իրագործման:

Օդեսսա, 17 *փետրուարի*

Ընդհանուր ապստամբութիւն է (?) Կովկասում. երկիրը գտնւում է զինուած խմբերի իշխանութեան տակ, որոնք կանգնեցրել են երկաթուղիների գնացքները, կտրել են հեռագրական թելերը, թալանել են զինարանները: Աւազակները ներս են խուժել Քութայիս և կողոպտել են քաղաքը, զօրքերն այնտեղից դուրս քշելուց յետոյ:

*

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մամուլը միաբերան յայտարարում է, որ մեծ իշխան Սերգէյի սպանութիւնը միանգամայն բնական հետևանք է Պետերբուրգի ու Մոսկվայի վերջին պաշտօնական կոտորածների:

Մոսկվա, 17 *փետրուարի*

Դեղավաճառանոցների գործադուլը լայն ծաւալ է առնում. բոլոր դեղատները փակ են:

Պետերբուրգ, 18 *փետրուարի*

Գործադուլը պայթեց 8 մեծ գործարաններում. գործաթող բանուորների թիւը հասնում է 28 հազարի:

Վօրոնէժ, 18 *փետրուարի*

Հարաւ-արևմտեան երկաթուղիների վարչութեան ծառայողները, հեռագրատան պաշտօնեաները և 3,000 արհեստաւորներ գործադուլ արին:

Կիշինեով, 18 *փետրուարի*

Սպանութեան անաջող փորձ եղաւ Կիշինեովի ոստիկանապետի վրայ:

Պետերբուրգ, 19 *փետրուարի*

Aurore-ին հաղորդում են Պետերբուրգից, որ կայսերական գերդաստանի անդամները, ժողով գումարելով, որոշել են խնդրել ցարից, որ սա յատուկ միջոցներ ձեռք առնէ՝ նրանց հովանաւորելու: Միաժամանակ նրանք բոլորն էլ վճռական կերպով յայտարարել են, որ դէմ են ուէ զիջումների:

Երկաթուղու գործաթող բանուորները իբր թէ մտադիր են կղզեացնել Պետերբուրգը, աւերելով կայարանները և երկաթուղային գիծը: Նրանք ունեն բաւականաչափ պայթուցիկ նիւթեր:

Միւնոյն լսագրի թղթակիցը հաւաստում է, որ Վարշաւայում տեղի է ունեցել խմբովին կոտորած: Նրա ասելով, 150 գործաթող բանուորներ, մէկ օրում, հրացանի են բռնուել այդ քաղաքի բանտերում:

Պարիզ, 19 *փետրուարի*

Echo de Paris-ին հեռագրում են, որ գեներալ Գրիպենբերգի մեկնելուց յետոյ, այժմ նոր գժտութիւն է ծագել Կուրոպատկինի և գեներալ Բիլդերինգի միջև:

*

Հաստատ աղբիւրներից հաղորդում են եւրոպական թերթերին, որ ցարը ամենաողբալի դրութեան մէջ է: Նա շարունակ ընկնում է այս կամ այն պատահական մարդու ազդեցութեան տակ և այդ իրողութիւնը յուսահատեցնում է մինիստրներին: Ռուսաստանի „հզօր“ ինքնակալը դարձել է կատարեալ երեխայ: Նա միշտ լաց է լինում և աղօթում է: Իր անկողինը նա շրջապատել է բոլոր սուրբերի պատկերներով և ժամանակ ու տրամադրութիւն չունի լսելու մինիստրների զեկուցումներն անգամ:

ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Պարիզ, 10 *փետրուարի*

Անթիւ ու բազմամարդ միտինգներ են գումարւում բոլոր քաղաքակիրթ երկրների մէջ, յօգուտ Ռուսաստանի կուռողների: Ցոյցեր եղան նոյնիսկ պարլամենտներում՝ Պարիզ, Հռովմ, Վիեննա:

Ամէն տեղ գլխաւորապէս սոցիալիստական կուսակցութիւններն են նախաձեռնող հանդիսանում հակացարական շարժման: Պետերբուրգի կոտորածը մի նոր առիթ եղաւ ֆրանսիացի սոցիալիստների համար՝ արշաւելու ռուս-ֆրանսիական դաշնակցութեան դէմ:

Բերլին, 10 *փետրուարի*

Երէկ երեկոյեան Բերլինում և արուարձաններում սոցիալիստները 21 ժողովրդական միտինգներ կազմեցին, բողոքելու համար Պետերբուրգի կոտորածների դէմ և յայտնելու գերմանական բանուորների համակրանքը Ռուսաստանի բանուորներին: Հռետորները մեծ մասամբ Ռայխստագի անդամներն էին:

Պարիզ, 10 *փետրուարի*

Յունուարի 27-ին Տիվոլի սրահում գումարուած 5,000 բազմութեան առաջ հռչակաւոր գրող Անատոլ Ֆրանս արտասանեց ճառ, որից քաղում ենք հետևեալ կտորը.

„Հը պէտք է պատմեմ ձեզ, թէ ինչպէս ցարը հրամայեց կոտորել մարդկանց, որոնք յանցաւոր էին միայն նրանով, որ սովից ու թշուառութիւնից հիւծուած, յուսահատութեան մէջ դիմել էին նրան, որպէս իրենց հօրը: Նրանց որդիական աղերսանքներին ու արտասուքներին նա պատասխանեց իր կօզակների նագայկաներով և զինուորների գնդակներով: Այդ գնդակները դիպան իր սեփական լուսանկարին: Այդպիսով՝ հակառակ իր կամքի՝ ցարը սպանեց ցարին, սպանեց ցարիզմը: Այն արիւնից, որ կարմրեցրեց Նեվայի սառոյցը, դուրս կրգան միլիոնաւորներ, որոնք կը հանեն ընկածների վրէժը: Ցարը սպանեց ցարին, ցարը յարուցեց յեղափոխութիւն, որը կը կլանէ ցարիզմը: Նիկոլայ Ալէքսանդրովիչ այլևս գոյութիւն չունի և նրա յիշատակը յաւիտեան մատնուած է ամբողջ աշխարհի նզովքին“: